

Ռուբեն Սևակ

ԲԺԻՇԿԻՆ

ԳԻՐՔԷՆ

ՓՐՅՈՒԱԾ ԷԶԵՐ



eMatenadaran.

Ռուբեն Մեյակ
Բժիշկին գիրքէն փրցուած էջեր

«Aegitas»

Մեակ Ռ.

Բժշկին գիրքէն փրցուած էջեր / Ռ. Մեակ — «Aegitas»,

Մեակի արձակ գործերը, ժանրային իմաստով, բազմազան են՝ հողվածներ, հանրամատչելի գրույցներ, քննադատական խորհրդածություններ: 1911-1914–ին հիվանդանոցում աշխատելիս բանաստեղծն ականատես է եղել մարդկային բազմատեսակ ողբերգությունների, որոնց ետեւում նշմարել է հասարակության բարոյական պատկերը ներկայացնող կենսական խոր դրամա: Այդ էլ ընկած է «Բժշկին գիրքէն վրցված էջեր» գրքի պատմվածքների հիմքում. դրանք բժշկի օրագրություններ են, որտեղ հեղինակը կենդանի ու բնական գույներով ներկայացրել է ստացական ախտերի անբողջ սարսափը՝ ատելություն ու նողկանք առաջացնելով դրանց նկատմամբ: Մեակը արեւմտահայ գրականության պատմության մեջ ըստ էության ստեղծում էր արձակի նոր ժանր:

Содержание

Այլասերում	5
Մի՛ շնար...	8
Կէս խենթը	11
Ապրիլը յաղթել է (մահուան դէմ պայքարը)	15
Տէր ողորմեա...	18
Գինովին աղջիկը	21
Կռունկը	24
Հրաշալի բժշկութիւն	26
Конец ознакомительного фрагмента.	29

Ռուբեն Մեակ Բժիշկին գիրքէն փրցուած էջեր

Այլասերում

ԱՅԼԱՍԵՐՈՒՄ

Կա՞յ աւելի սիրտ բզկտող իրականութիւն մը, քան մեյամաղձոտ մանուկները...

Տղու մը պարզ ու վճիտ հոգին ինչպէ՞ս կրնայ տխուր ըլլալ, քանի որ յուսահատութիւնը խիստ բարդ հոգեբանութիւն մը կ'ենթադրէ:

Բնական երեւոյթ մը չէ այս, այլ ախտաբանական ծնունդ մը, օրէնքէն դուրս շեղում մը, բացառութիւն մը: Խոստովանինք սակայն որ այս բացառութիւնները հետզհետէ օրէնքի կարգ անցնելու վրայ են:

Նոր քաղաքակրթութեան մեծագոյն վերքերէն մէկն է այս այլասերումը, վաղուան հիւանդութիւնը, հիւանդութիւններուն յոռեգոյնը՝ որովհետեւ ո՛չ մէկ բժշկութիւն պիտի կրնայ գայն դարմանել: Իր մանրէն երբեք պիտի չգտնուի:

Չին ցեղեր խարոյկներու վրայ կ'այրէին իրենց լուսնոտներն ու ջլագարները՝ իբրև չար ոգիներ: Պղատոն իր իտեալ հանրապետութենէն կը վանէր մեյամաղձոտները: Սպարտացիներ իրենց տխուր ծնունդները գետը կը նետէին՝ առոյգ ու զուարթ մանուկներ միայն ընտրելով ցեղին պահպանումին համար. ահա ա՛յս կերպով այդ ափ մը փոքրիկ ազգը պատմական դիւցազուններու մեծագոյն ազգը եղաւ:

Այսօր այդ բարբարոս միջոցները ի սպառ հեռացուած են քաղաքակրթութեան սահմանագլուխներէն. բայց այլասերումի վտանգը երթալով անկարելի համեմատութիւններ կը ստանայ:

Այս երկաթէ դարին համար երկաթէ ուղեղներ են պէտք:

Մինչդեռ, օրը օրին, հեւ ի հեւ, ճգնաժամային ու զինեմոլ գործունէութեան մը մտրակին տակ հալածող մարդկութիւնը ջլագար ծնունդներ միայն կու տայ:

Ալեկոծ Երուսալան շատոնց ի վեր կը հնչեցնէ ահագանգը:

Օրէ օր նոր սկզբունքներ կը կիրարկուին, առողջապահիկ խիստ միջոցներ կը հետապնդուին. ախտածին մանուկներու համար լեռնային գաղթավայրեր կը հաստատուին, ու անտառային դասարաններ, ու բացօթեայ վարժարաններ, ու աշակերտական ազարակներ:

Այս բոլոր ճիգերուն նպատակն է այդ այլասերած մանուկներուն ուսմունքէ աւելի արեւ տալ, միտքէն աւելի մարմինն աշխատցնել, զիրենք կողիացնել, չէզոքացնել, հեռացնել մտաւորական ասպարէզէն: Որովհետեւ վտանգը միայն անհատական չէ, այլև ընկերական: Իրենց հիւանդագին ու չարչրկուած ուղեղը գիտութենէն միայն թոյն կը ծծէ ու թոյն կ'արտածորէ: Իրենց մաղձոտ հոգին կը դառնացնէ նախ իրենց սեփական կեանքը, յետոյ իրեններուն կեանքը, ու յետոյ – ամբողջ ցեղի մը կեանքը...:

Աշխարհիս բոլոր մարդասպաններն ու բոլոր չարագործները ձեռք ձեռքի տուած՝ պիտի չկրնային այնքա՛ն երիտասարդ, այնքա՛ն խոստմնալի, այնքա՛ն ընտրուած հոգիներ սպաննել քան Շօփէնհաուէր մը, Նիցշէ մը, Պայրըն մը...:

Այլասերած մանուկներու օրօրոցներո՛ւն մէջ պէտք է փնտռել անձնապայանութեան քարոզիչները, յոռետեսութեան առաքեալները, ապականութեան մարգարէները:

Անոնք կը ջլատեն գործունէութեան ամէն տենչ, երջանկութեան ամէն յոյս, սրբութեան ամէն հաւատք:

Անոնք չեն յառաջդիներ այլ կ'ոստնուն, չեն երագեր այլ կը գառանցեն, չեն օրհներ այլ կը նգովեն, չեն սիրեր ալ կը տոփան:

Իրենց երգը հայիոյանքի մը պէս ամբարտաւան է, իրենց ժպիտը հեգնութեան մը պէս վիրաւորիչ:

Օրինա՞կ կ'ուզէք: Բայց ամէ՛ն ազգերէ աւելի Հա՛յ մտաւորականութիւնը կը վխտայ այս բացասական հանճարներով:

Գիտեմ որ հին մշակոյթ ունեցող ցեղերու համար այլասերումը տիեզերական օրէնք մըն է: Գիտեմ որ մեզ նմանող հին ու անտէրունջ ցեղ մը՝ ինչպէս են Հրեաները՝ նոր ազգերէն քառապատիկ աւելի խենթ կը ծնցնէ: Սակայն այդ ափ մը Հրեայ ցեղը աւելի բազմաթիւ հանճարներ տուաւ աշխարհին՝ քան ամբողջ եւրոպական ազգերը՝ ձեռք ձեռքի տուած...:

Մենք ալ իրենց պէս ինչո՞ւ չկարենայինք տալ միակ Հայ հանճար մը որուն գոյութիւնով սա խրոխտ Եւրոպան հպարտանար, եւ համայն մարդկութիւնը բանո՞վ մը գոնէ պարտական ու երախտագէտ ըլլար մեզի:

Կէս-հանճարներ շա՛տ: Բայց երբ փոքրիկ ցեղի մը մտաւորական բանակը տաղանդաւոր փոքրիկ վիժուկներով միայն կը լենայ՝ անհանդուրժելի, գայթակղեցուցիչ, դատապարտուած ցեղ մը կ'ըլլայ այն:

Զգո՞յ՞, գգո՞յ՞:

Եթէ Եւրոպան է որ կը հնչեցնէ այլասերումի ահագանգը, մի՛ մոռնաք որ այդ սարսափելի ախտը ամենէն առաջ մե՛ր ցեղին կը սպառնայ՝ իբրեւ հին ցեղի մը:

Ու մենք՝ փոխանակ արմատախիլ ընելու, տգիտօ՞րէն կ'ընտրենք է՛ն ախտավարակ ծիւերը ու գիրե՛նք միայն կը մշակենք:

Այն բոլոր առոյգ, պայքարող, զուարթ ու աշքաբաց երիտասարդութիւնը որ կը լեցնէ մեր վարժարանները, կ'առնենք օր առաջ գործի տալու համար...: Իսկ այն քանի մը ճղճիմ, տժգոյն ու տխուր տղաքները, այն պատանի ծերունիները որ արեւէն ու պայքարէն խուսափելով՝ դպրոցի մութ անկիւններուն մէջ թուրթ կը մրտտեն, անոնք դպրոցէ դպրոց, երկիրէ երկիր , համալսարանէ համալսարան կը դրկենք:

Խեղճե՛րը...: Անո՞նք կը լեցնեն պանդուխտ ուսանողի գերեզմանները, անոնք կը լեցնեն հարուստի նախասենեակները ու վաճառականի գրասենեակները. հիւանդանոցի խշտեակները անո՞նք կը լեցնեն...:

Ու կը պատահի մեզ ա՛յն ինչ որ ո՛չ մէկ քաղաքակիրթ ազգի չէ պատահած: Մեր գիւղացի ու շուկայի դասակարգը աւելի՛ մտացի է քան ա՛յն որ մտաւորական կը կոչուի. ընթերցողը աւելի ողջամիտ է քան գրողը. առաջնորդուողը աւելի հեռատես է քան առաջնորդողը. ուրիշ խօսքով՝ մարմինը աւելի խելացի է քան ուղեղը...:

Զարմանալի չէ ուրեմն որ ընթերցողները մեր մէջ հետզհետէ կը քիչնան: Այսօր արդէն աւելի գրող կայ, քան կարդացող:

Բնախօսական օրէ՛նք մ'է որ մարմինը իր մէջէն քիչ-քիչ կը չէզոքացնէ, կ'անջատէ, կը վտարէ այլասերած մասերը:

Նոյն օրէնքո՞վ միայն կարելի է բացատրել թէ ինչո՞ւ մեր մտաւորականութեան ու մեր հասարակութեան միջեւ գտնուող կապը քիչ-քիչ կը բարակնայ: Տեղը կը մնայ առաւել քան երբեք առո՞ղջը, ու իր մէջէն կը չէզոքացնէ, կ'անջատէ, կը վտարէ օտարացած ու այլասերած տարրերը: Գլուխը մարմնին կապող նիհար պարանոցը երթալով կը բարակնայ: Ու հեռու չէ գուցէ այն օրը երբոր վիզը փրթելով՝ մեր մտաւորականութիւնը անմարմին գլուխ մը պիտի ըլլայ միայն, եւ մեր ցեղը՝ անգլուխ մարմին մը...:

Չէ՛ք տեսներ արդէն թէ ի՛նչպէս շատ մը գրագէտներ լիրբ քաջութիւնը ունին յայտարարելու թէ իրենք ժողովուրդին համար չէ՛ որ կը գրեն:

Ո՛չ, հօտին ու հովիւներուն միջեւ անհասկացողութիւնը երբեք այսքան մեծ չէր եղած:

Գառնուկի պէս անզէն ցեղ մը ամէ՛ն օր, ամէ՛ն օր կը յօշոտուի: Իսկ մեր գամբոները խելօքցեր, փիլիսոփայացեր, քաղաքակրթութեան են, տիեզերական եղբայրակցութեան մը խօսքերը կ'ընեն մեզի, ու կ'երագեն այն հեռաւոր օրուան՝ ուր գայլ ու գառնուկ մէկտեղ կ'արածուին...:

Մանուկի պէս տգէտ ցեղ մը ուսման կաթին է կարօտ, այն բարի ու անարատ ու սպիտակ կաթին որ հիւանդներն իսկ կարենային մարսել: Իսկ մեր համալսարանականները,

որ մեր մտաւոր ստնտու մայրերը պիտի ըլլային, դեռ կերածնին չմարսած կու գան մեր առջեւ փսխելու...:

Որքուկի պէս անտէր ցեղ մը հուժկու, ու լուսեղ ու սիրտքուխ բարբառի մըն է ծարաւ: Իսկ մեր գրագէտները հանելուկային, առեղծուածային, խաւարակոտ բաներ կ'ըսեն իրեն. ու մեր քերթողները՝ գրիչնին հայ արեան մէջ թաթխել վերջ՝ չինարէն տաղեր կը գրեն որպէսզի մա'րդ չհասկնայ...:

Թռչունի պէս վիրաւոր ցեղ մը, փոքրիկ վիրակապի մըն է կարօտ՝ իր թեւերը նորէն բանալով միջոցին մէջ արծիւի պէս սաւառնելու համար: Իսկ մեր ընկերաբանները թո'յն կը փչեն բոյներէն ներս, ու մեզ կը խօսին այն տարտամ ապագաներուն վրայ՝ ուր ազգ ու հայրենիք ու ընտանիք կը լուծուին համաշխարհային միջազգայնութեան մը մէջ...:

Այսպէ՛ս էր նաեւ հին Յոյներուն մէջ: Երբոր հիւանդ մը փրկելու ամէն յոյս կը կորսուէր՝ բժիշկը կը հեռանար իր սնարէն, ու փիլիսոփայ մը կը նստէր հոգեվարքին մօտ, մահամերձը մխիթարելու համար այն յոյսով թէ օր մը ամէ՛ն կեանք ու ամէ՛ն անհատականութիւն պիտի հալին տիեզերական գոյացութեան մը մէջ...:

Ո՛չ, մենք դեռ այդ օրին չհասանք, մենք դեռ ապրիլ կ'ուզենք, մեզ հոգիի ու մարմնի բժիշկներ միայն պէտք են:

Չեռո՛ւ մենէ՛ ախտագի՛ն մտաւորականներ: Դուք ցեղին ուղեղն էք. բայց երբ այդ ուղեղը ուրիշ կերպ չի կրնար խորհիլ քան յուսահատեցնելով մեր կենսունակութիւնը, մենք պիտի փրցնենք ու նետենք այդ ուղեղը:

Մենք նոր միտքեր, նոր սիրտեր, նոր հոգիներ պիտի դարբնենք:

Մեզի կարմիր ու մսուտ շուրթներով, ուժեղ ու ժպտուն գրականութիւն մը պէտք է:

Մեզի առողջ ու երիտասարդ մտաւորականներ պէտք են: Ձուկն իր գլուխէն կը հոտի, ազգն՝ իր մտաւորականներէն: Անո՛նք են ցեղի մը գլուխը:

Կրնայ մարմինը շատ ուժեղ ու շատ գործունէայ ըլլալ, բայց երբ ուղեղը խաթարուած է՝ այդ մարմնին շարժումը պիտի ըլլայ միա՛յն յիմարական գործունէութիւն եւ անպտուղ յոգնութիւն:

Ահա թէ ինչո՞ւ իրական վտանգները թողլով՝ հովերուն դէմ ու մենք մեզ դէմ կը պայքարինք: Ահա թէ ինչո՞ւ փոխանակ յառաջդիմելու՝ խենթերու պէս կեցած տեղերնուս վրայ կը ցատկենք երկու հազար տարիէ ի վեր...:

Այո, մեր ցեղը տարօրինապէս կենսունակ ու աշխատող ցեղ մըն է: Այո՛, մեր հնամենի նաւը դեռ ջուրերուն վրայ կը ծփայ, դեռ չընկղմեցաւ: Բայց ի՞նչ է պատճառը որ երէկուան նաւակները մեզ արդէն անցան, ու մենք Ուրուական Նաւին պէս կը ծածանինք դեռ, անխորասուզելի՛, բայց եւ հաստատ ցամաքի մը հասնելու անկարող...:

Ասոր պատճառները շատ բարդ են անշուշտ: Բայց գլխաւոր պատճառներէն մէկն ալ ա՛յն է որ դէկին գլուխը կը նստեցնենք մեր է՛ն ախտագին, է՛ն այլասերած, է՛ն անպէտ ծնունդները:

Սակայն ստո՛յգ, ստո՛յգ կ'ըսեն ձեզի , վտանգը մեծ է, շատ մեծ, աւելի՛ մեծ, քան կրնանք ենթադրել:

Ժամանա՛կն է հակազդելու , հակազդե՛նք:

Մեզի նոր Ոսկեդար մը պէտք է, նոր Ոսկեդա՛ր մը:

Այլասերո՛ւմ, ո՛չ , Վերածնո՛ւնդ...:

Լօզան , 1911

Մի՛ շնար...

ՄԻ՛ ՇՆԱՐ...

– Բժի՛շկ , – ըսաւ , – գաւակ չունենալու համար ճար մը, ճարակ մը չունի՛ս...:

Ու ա՛յնքան բնական ու մտերիմ կերպով ըսաւ այդ ահագին, գրեթէ ոճրագործային հարցումը, որ զարմացած երեսը նայեցայ. լա՛ւ սնած ու ինքիքսէն գոհ մարդու երես մը, կարմիր ու տափակ, որ կարծես առատ ճաշէ մը վերջ « Փա՛ռք Տեառն» կ'ըսէր:

Փա՛ռք Տեառն: Ո՞րկէ արթնցաւ մէջս այս միտքը, չեն գիտեր. յետոյ միայն հասկցայ որ Տիրոջ փառք տալու այնքան ալ զօրաւոր պատճառներ չունէր:

Իր նախնական հագուստ-կապուստը, իր բարի՛ անասունի աշերը, իր լայն վիզը որ օձիքը չէր սեղմեր, իր ծանրկեկ ոսկի շղթան, հաստ փայտի մաշած գաւազանը՝ որուն կը կոթնէր, ու վերջապէս իր ձեռքի սեւ համրիչը, ինծի հասկցուցին, թէ այս մարդը համոզելու համար՝ իմ փաստերս Գիտութենէն աւելի Կրօնքին մէջ պէտք է փնտռէի, «Աճեցէք ու Բազմացարուք»-ին շուրջ:

Բայց խորաթափանց ու խորամանկ, ան իսկոյն զգաց որ իմ Աստուածաշնչական հմտութիւնս շա՛տ տարտամ, ու կրօնական փաստերս ալ շա՛տ տկար էին, ու ինծի ցոյց տալու համար որ փաստերուն զօրաւորագոյնը ի՛ր կողմն էր, իր գրպանին մէջ կամա՛ց մը ձեռքով քանի մը արծաթներ հնչեցուց:

Այն ատեն ա՛լ չի համբերեցի:

– Ի՛նչ , – ըսի , – թող անդին աղքատին գաւակները տասնեակներով ծնին, չոր հացով մը սնծնան փողոցներու մէջ, շան ձագերու պէս, առանց բժիշկի ու կրթութեան, երբ փոքր՝ գերեզմանները կը լեցնեն, երբ մեծ՝ ձեր գործարաններն ու քսակները, ու դո՛ւք՝ որ ամէն դիրութիւն ունիք առողջ, զարգացած, օգտակար անհատներ հասցնելու՝ եկեր էք գաւակ չունենալու համար ճար ու ճարա՛կ խնդրելու. դո՛ւք որ ձեր ուժին ու ձեր տարիքին լիութեանը մէջն էք, կայտա՛ն , առո՛ղջ...:

– Առո՛ղջ, առո՛ղջ. ընդմիջեց՝ գլուխը հաստատ-հաստատ շարժելով:

Բայց ես թող չտուի որ շարունակէր. գիս համոզելու երկրորդ փորձ մը ըլլար թերեւս այն. ու մատենադարանս ցոյց տալով իրեն.

– Կը տեսնէ՞ք , – ըսի , – այս բոլոր գիրքերը. անոնք իմ վարպետներս ու իմ հայրերս են. բոլորն ալ ինծի կը նային, ես իրաւունք չունի՛մ կեանքէն կանխաւ գրկելու այն գաւակները, որոնք թերեւս օգտակար ու երջանիկ պիտի ըլլան կեանքին մէջ...:

Այն ատեն, ծա՛նր-ծա՛նր կշռելով իր բառերը՝

– Բժի՛շկ, բժի՛շկ , – ըսաւ , – դուն դեռ երիտասարդ ես. առա՛նց գիտնալու մի՛ դատեր. գիտութեան պէս չոր մի՛ ըլլար. այդ մատենադարանին գիրքերը բոլորն ալ կոնակնի՛ն դարձուցեր են կեանքին. մինչդեռ կեա՛նքը... Է՛ն երջանիկ կարծուած կեա՛նքը...:

Չի կրցաւ շարունակել. օդին մէջ լա՛յն շարժում մը ըրաւ ձեռքով, ու գլուխը վար հակեց: Գերասանութի՛ն էր ըրածը...:

Կը դիտէի այդ հակած գլուխը, որ ո՛չ հանճարի ու ո՛չ չարիքի ուռեցքներն ունէր. կլոր, պարկեշտ, քրիստոնէա՛յ գլուխ մը: Յետոյ մազերը դիտեցի, քառասունէն-քառասունը հինգնոց աղ-պղպեղ մազեր՝ որոնք իր տարիքին ու դաստիարակութեան համեմատ կա՛րճ պէտք էր կտրուած ըլլային. ինչո՞ւ երկայն էին անոնք. տեղ-տեղ երեցող բացութիւնները ծածկելու համար: Այդ համեստ ու գաղտնի ճաղատութիւնը ուշադրութիւնս գրաւեց. անիկա զագաթին լուսեղէն թագը չէր, ոչ ալ ճակատին պատկառելի բացութիւնը, որոնց առաջինը փորձառութեան, եւ երկրորդը՝ խելացութեան նշան կը համարուին , ու երկուքն ալ քիչ թէ շատ հպարտ են իրենցմէ, ճակատս բաց է-ի հպարտութիւնով մը: Ո՛չ, ասիկա պահուրտո՞ղ ճաղատութիւն մըն էր. հագի՛ւ տեսանելի, տե՛ղ-տեղ միայն անտատին մէջ գտնուող բացաստաններուն պէս՝ որոնք հեռուէն չեն երեսար ու գիտցողները միայն կը գտնան: Յետոյ, մտքի ոստումով մը, խորհեցայ որ ձեռքի հաստ գաւազանը զարդի համար չէր,

այլ իր քալուածքը երաշխատրելու համար...: Ու իսկո՞յն կասկածը ծագեցաւ մտքիս մէջ, յանկարծակա՛ն, սարսափելի՛, չգապո՞ղ, կասկածը: Ի՞նչ... այդ բարի քրիստոնէայի գլխուն մէջ կը կրծէ՞ր միթէ որդը, աշխարհիս ամենէն զգուելի որդը...:

Կարելի՞ է սակայն այդքան փոքր բաներէ ախարա՛ն մեծ կասկածներ ունենալ: Ո՛վ դուք, որ այսպէս կը խորհիք, չէք գիտեր թէ հիւանդութիւն մը կայ որ բոլոր ախտերը իր մէջ կը պարունակէ ու կը գերազանցէ զանոնք. ճաղատութիւն՝ թէ բորոտութիւն, յիմարութիւն՝ թէ անդամալուծութիւն, կոկորդի՞ թէ փորի ցաւ, բոլո՛րն ալ. ու դէռ այնպիսի՛ ցաւեր, որոնք չեն ըստի որ չեն խոստովանուիր: Ու այդ հիւանդութիւնը մեր մէ՛ջն է, ամենուրէք, ամենագո՛ր, անտեսանելի՛: Իր անունին շուրջ մարդկութիւնը դասադիր լուծութիւն մը սարքած է. չարիքին լուծութիւնը: Հարուստ շրջագգեսաներու տակ կը պտտի, ներկուած շրթներու վրայ կը ժպտի, մէ՛կ հպումով կը փոխանցուի...: Ի՞նչ պատճառ կար որ այս մարդը գերծ ըլլար այդ հպումէն:

– Խեղճ մարդ , – ըսի , – քու կեանքիդ մէջ գաղտնիք մը կայ որ ինձմէ կը պահես:

Սարսափա՛ծ՝ դրանս նայեցաւ որ լաւ մը գո՞ց է:

– Գթա՛ ինձի, գթա՛ տարիքիս, բժի՛շկ , – ըսաւ... – Բայց քանի որ մատոյ վերքի՛ն վրայ դիր, լաւ է որ սիրտս բանամ, անգամ մը գոնէ կեանքս թունաւորող ցաւը դուրս թափեմ: Ա՛խ, եթէ ժամանակին գիտցա՛ծ ըլլայի, խօսա՛ծ ըլլայի, թերեւս իմ ցաւիս ալ դարման մը գտնէին: Բայց մեզի այս բաները չտրվեցուցին, բժի՛շկ: Դպրոցները մեզի քառակուսի արմատներ տրվեցուցին. կեանքին արմատը՝ ամո՛թն է ըսին: Ու ես՝ քիչ-շատ դիրքի տէր մարդ, նոր կարգուած մարդ, ես ինչպէ՛ս ըսէի որ ամօթալի ու սարսափելի բա՛ն մը կեանքիս արմատը կը կրծէր...: Քանիսնէ՛ր գիտեմ որ աներկի՛ղ ու անպատի՛ժ կը մեղանչեն: Ես միշտ ժուժկալ ապրեցայ. կնոջմէս գատ կին չճանչցայ...:

Կասկածո՛վ երեսը նայեցայ:

– ...Բացի մէկէն... մէ՛կ անգամ միայն...: Ու գլուխը անգամ մըն ալ դուռին կողմը դարձուց, ու ձայնը աւելի ցածցնելով ըսաւ.

– Այն ստեն մենք դէռ նոր ամուսնացեր ու մեղրալուսնի համար Վենետիկ գացեր էինք: Օր մը, Մեծ-Հրապարակին վրայ կեցեր՝ աղաւնիները կը դիտէի: Վրայէս հասկցան որ օտարական մըն եմ. մէկը եկաւ որ ինձի Սուրբ Մարկոսին թուականները պատմէ. միւսը եկաւ որ Տոժերու պալատը պտտցնէ. ուրիշ մը եկաւ որ զիս ապակեգարդերու գործարանները տանիլ կ'ուզէր: Վերջապէս չորրորդ մը եկաւ որ սրտէ՛ս խօսեցաւ. «քեզի , – ըսաւ , – աշխարհիս ամենէն զեղեցիկ բանը ցուցնեմ »: Արդէն Վենետիկի համար այդ տեսակ խօսք մը լսեր էի: Գաղջ արեւը արիւնս կը տաքցնէր, առջեւս աղաւնիներ իրա՛ր կը կծծէին... «Աշխարհ գալ ու աշխարհին համը չառած երթա՛լ՝ ըսի. ինչո՞ւ Աստուծոյ շինած հրաշալիքին մօտենալը մեղք ըլլայ...»: Մօտեցայ ու բերնիս համը առի...: Երբ պանդոկ դարձիս՝ տեսայ կինս – դէռ տասնեօթը տարու – որ ժպտելով ինձի իր շրթներն երկնցուց, ինքզինքէս զգուեցայ. հասկցա՛յ որ հոգիս թունաւորուեր էր, ամիսներ վե՛րջ միայն գիտցայ որ մարմինս ալ թունաւորուեր էր...: Ի՛նչպէս կրնայի երեւակայել թէ, կապոյտ աչերով եւ սեւ մագերով այդ փոքր աղջիկը, դժոխայի՛ն սերմնացանի մը պէս՝ մա՛հ էր ցաներ մէջս իր մերկ թերեւով...:

Ու այդ պարկեշտ մարդը, որ ո՛չ Տոժերուն պատմութիւնը գիտէր Վենետիկէն համ առնելու համար, ո՛չ Հառաչանաց-Կամուրջին անցեալը, ո՛չ Սուրբ Մարկոսին արժէքը, այդ խոնաւ քաղքին մէջ, միայն Վենետիկի վաճառուիին էր տեսեր...:

– Սողոմ-Գոմո՛ր, Սողոմ-Գոմո՛ր, կը հառաչէր միայն, երկինքին կրա՛կը թող տեղայ այդ մեղքի տուններուն վրայ:

Ուզեցի իր ցաւը մեղմել, ցոյց տալով որ քանիսնէ՛ր կը տառապի իր ախտէն:

– Եթէ , – ըսի , – Սողոմոն իմաստունին հետ քիչ մըն ալ Վոլթեր կարդացած ըլլայիր, աչքերդ աւելի՛ բաց պիտի ըլլային աշխարհային իրողութիւններուն վրայ: «Երբոր , – կ'ըսէ այդ ծերունին , – երեսուն հազարնոց բանակ մը հաւասար թիով բանակի մը դէմ կը ճակատի, կրնանք վստահեցնել որ երկու կողմէն մերձաւորապէս քսան հազար սիֆիլիզ կայ»:

– Ա՛խ, բժի՛շկ, այդ բառը մի՛ ըսեր, այդ բառը կը զգուեցնէ զիս...: Վոլթերէն հազարներով տարի առաջ Աստուածաշունչը՝ աւելի՛ պատշաճ կերպով, արգիլուած պտուղին քով օձ մը

նկարեր է...: Այդ օճը իմ բոյնս քանդեց, ո՛չ թէ միայն իմ արիւնս, այլ գաւակներուս արիւնն ալ թունաւորեց: Այդ խեղճերը՝ դեռ հազի՛ր քանի մը ամսու՛ կը վիժէին իրենց մօր արգանդէն, կեանքի գալարումներով, արիւնոտ, գարիւրելի...: Յետոյ գաւակ մը եկաւ , ինն ամսու. ա՛խ, այդ գաւակը, ի՛նչ գաւակս...: Մարմինն ամբողջ փշտիկ-փշտիկ, պալար-պալար, թարախ ու շարաւ...: Միայն երկու օր ապրեցաւ. բայց այդ երկու օրերը՝ երկու դարեր...: Ո՛չ, բժի՛շկ, ես ալ գաւակ չեմ ուզեր. եթէ նոյնիսկ ան ապրի, չէ՞ որ զիս անհիծելով պիտի ապրի: Եհովան երբ կ'ըսէր թէ « Ես վրիժառո՛ւ Աստուածն եմ, ու մինչեւ եօթներորդ սերունդդ կը հարուածեմ քեզ » չէ՞ որ այս հիւանդութեան համար կ'ըսէր...:

Ու այդ հաստատուն , այդ աստուածավախ մարդը, տղո՛ւ մը պէս, տղո՛ւ մը պէս սկսաւ լալ...:

– Ինչ կ'իմս ինձի իր հարստութիւնը բերաւ: Ան ինձ իր միամտութիւնն ու իր ժպիտը բերաւ, վա՛յ Աստուած, ես ի՛նչ տուի իրեն: Ան կարծեց դրախտը մտնալ , ես իր դպած տեղը դժոխք ըրի: Ան երախայ մը ուզեց, ես է՛ն սարսափելի հրէշը նետեցի իր ձեռքերուն մէջ: Ան իր շրթներն ինձի մօտեցուց, ես իմ երախս բացի. նայէ՛, բժի՛շկ, բերա՞ն է այս...:

Իր բաց բերնէն գաղջ գարշահոտութիւն մը ելաւ. խորը, բերնին խորը, պատառոտած, խոռոչուած, կերուած տեղեր կային. տեղ-տեղ կարմիր, արիւնոտ, ճերմկոտած, դեղնոտած. «որդնոտած » պիտի կարծէր անփորձ աչք մը:

Ու այս մարդը որ մարդերուն մէջ կը շրջէր, յարգուա՛ծ, որ խունկ ու սաղմոս կը բուրէր, որ այրերուն իբրեւ տիպար այր, աղջիկներուն իբրեւ տիպար ամուսին կը ցուցուէր, այս մարդը՝ իր մէ՛կ համբոյրով, հազար անգամ աւելի թունաւոր քան Յուդայինը, ամբողջ սերունդներ վարակելու պաշտօնը ունէր...: Ու բախտը, որուն համար կո՛յր է կ'ըսեն – հազարներո՛ւ մեղքը քաւելու համար կարծես դիտմամբ ընտրած էր այս խե՛ղճ քաւութեան նոխազը, այս պարկեշտ ու տգէտ մարդը, որ նոյնիսկ կ'անգիտանար թէ իր մէկ լորձունքին մէջ ա՛յնքան վարակիչ ուժ կայ...:

Ոտքի ելաւ. գլուխը երերակալէն՝ բռունցքը դէպի երկինք վերցուց, եւ կարծես թէ Մովսէսին երկու քարէ-տախտակները վերցնէր իր երկու ձեռքերուն մէջ, անոնց բովանդակ ծանրութեան տակ ընկճուած՝ ինքնիրեն՝

– Մի՛ շնար... – ըսաւ:

Մի՛ շնար: Այդ մէ՛կ բառին մէջ պատուէր մը ու պատուհաս մը կար, դաս մը ու դաւադրութիւն մը: Բոլոր կիրքերը, փորձութիւնները, վայելքները, գաղտնի համբոյրները կը դատէր ու կը դատապարտէր այդ մէ՛կ բառը: Մի՛ շնար... ամբողջ արքայութիւն մը ու դժո՛խք մը:

Ու երբ ան կը մեկնէր, ես անգա՛մ մըն ալ կը դիտէի իր հաստ փայտէ գաւազանը՝ որ իր անկայուն ու ինկող քայուածքը կ'ապահովէր, իր մատները՝ որ թեթեւ մը կը դողային, իր թարթիչները որ վարագոյրի պէս վար իյնալու ձեւ մը ունէին, իր բիբերը՝ ասեղի ծակերուն պէս նեղ, ու կը նախատեսէի որ իր քայլերուն ետեւէն կ' երթար թապէտը, տռամին վերջին արարուածը, որ մարդուն վրայէն իր աստուածութիւնը կը վերցնէ՝ անոր ծննդագործութիւնը ջնջելով, որ գարիւրելի ցաւերով կը տանջէ, որ կ'անդամալուծէ ու կը ստորնացնէ, որ մարդկային ամէն սրբութիւն գարշանքի մէջ կը լրացնէ, որ չի՛ մեռնիր, այլ ողջ-ողջ կը փտեցնէ...:

– Մի՛ շնար...:

Լօզան , 1913

ԿԷԱ ԽԵՆՔՐ

ԿԷՍ ԽԵՆՔԸ

Գեղեցիկ առտու մը անակնկալ նամակ մը առի Պոլսէն: Յայտնի ընտանիք մը կը խնդրէր ինձմէ իսկոյն Մոնթէ-Քարլօ մեկնիլ՝ որովհետեւ հոն իրենց տղան յանկարծակի խենթեցեր էր, ու իբրեւ փաստ՝ ներփակ սա՛ տեսակ նամակ մը դրկեր էին՝ տղուն կողմէ իրենց գրուած.

«Սիրելի սիրեցեալք

Գրութիւննիդ ստանալով ստանալուս պէս ստացայ ու պատասխանը գրելով գրելնիքէն կը գրեմ...»:

Ու այս ոճով 16 խոշոր երեսներ: Բայց ինչ որ զիս պարունակութենէն աւելի հետաքրքրեց՝ գիրերուն ձեւն էր: Հազար հինգ հարիւր տարիէ ի վեր Սահակ-Մեսրոպին գիտը այսքա՛ն չարչարուած չէր: Այլանդակ հասակներով, դողդոջո՛ւն, բարակո՛ւկ գիծեր, որոնք կ'ելլէին, կ'իջնէին, ո՛ր երթալնին չգիտնալով կը շարուէին, տեղ մը կը մնային, կամ ինքզինքնին գտնելու համար ծուռ ու մուռ շրջանակ մը կը գծէին եւ խոշոր բառ մը ծակի մը մէջ կը սեղմէին, այնպէս որ բառերը՝ ինաստ մը տալու ճիգով ստիպուած էին կրկնուելու, տասնապատկուելու, քովէ քով շարուելու, գլուխ գլխի տալու՝ զինուորական գծով տողանցքի մը պէս:

«Յարգանքներուս յարգանքներով յարգանքներս...»:

Ու այս 16 էջերուն մէջ ստորակէտ մը, վերջակէ՛տ մը անգամ չկար: Որովհետեւ այդ ամենափոքր բանը որ կ'էտն է՝ իր տեղին դնելու համար բաւական որոշութիւն ու վճռականութիւն պէտք է, բա՛ն մը որ շա՛տ խելօքներուն անգամ կը պակսի: Ու նամակին պարունակութիւնը ա՛յնքան ալ ապուշ չէր: Տարտամ ու անհամարձակ կերպով ա՛յն կը հասկցուէր որ տղան իր դրամները կերեր, նոր ոսկիներ կ'ուզէր. (այդ ոսկիներուն թիւը չկարդացուելիք բան մըն էր, թուաբանութիւններու մէջ չմտած բոլորովին նոր թուանշան մը...):

Ճամբորդ մը ասկէ աւելի խելացի ի՛նչ բան կրնար պահանջել իր հարուստ ծնողքէն: Բայց անոնք կ'ենթադրէին որ անպատճա՛ն տղան իր հարստութիւնը խաղարաններուն մէջ կորսնցնելով խելքին եկած էր:

Շոգեկառքին մէջ 18 ժամեր քանի՛ անգամ կարդացի այդ 16 էջերը՝ մտքիս մէջ լոյս մը ծնցնելու համար, ու ընդհակառակը, այդ բոլոր սիրելիք սիրեցեալները, շոգեկառքին ցնցումները, անիւներուն տկոնկոցը բոլորովին թմրեցուցին ուղեղս: Այդ նամակին ապշութիւնը անհանգստացուցիչ, գրեթէ վարակի՛չ բան մը ունէր իր մէջ: Ու կէս գիշերէ մը վերջ, բոլորովին շուարած, իջայ Մոնթէ-Քարլոյի կայարանը:

Անձանօթ քաղաքի մը մէջ ո՛ր երթալ այդ մութին: Նեղ փողոցի մը մէջ, դրան մը վերեւ, աղտոտ լոյս մը կը պլպլար, մի՛ս-մինակ ու կասկածելի – (չեմ գիտեր ինչո՞ւ): Մօտեցայ, պանդոկ մըն էր, աղ-պղպեղ գէր կին մը սենեակ մը ցուցուց. բայց դրան կղպանք չունենալը անհանգստացուց զիս...:

– Հոս վստահութեան տուն մըն է, ըսաւ կինը... Պարոնը մինա՞կ է...:

– Այո՛, պատասխանեցի... սնտուկս կայարանը ձգած եմ...:

Փոքրիկ սենեակ մըն էր՝ թուրթ ծաղիկներով: Գաղջ, թափանցող, անանուն բոյր մը կարօղին մէջ, իգական հոտ մը: Լայն անկողինը հագի՛ւ ծածկուած էր. ճնթկած սաւան մը՝ խորհրդաւոր փոսերով: Մոմս մօտեցուցի, երկու կարմիր աղտեր տեսայ, դեռ թաց...:

– Մնաս բարո՛վ վստահութեան տուն...:

Ու նոր արշաւ մը սկսայ մութին մէջ, փողոցէ փողոց, մինչեւ որ յոգնած գլուխս մաքուր բարձի մը վրայ կարողացայ հանգչեցնել: Առաւօտուն, սովորական ժամիս արթնցայ: Դեռ սենեակը խաւար էր. քնացայ ու նորէն արթնցայ, նորէ՛ն խաւար. բայց այնպիսի խաւար մը՝ ինչպէս ըլլալու էր աղջամուղջը, դեռ Աստուած իր նշանաւոր «Եղիցի լո՛յս»ը չարտասանած: Այս որքա՛ն երկար էին Մոնթէ-Քարլոյի գիշերները: Նորէն ու նորէն քնանալ փորձեցի, մինչեւ որ պանդոկապետը, կեանքիս վրայ կասկածելով՝ եկաւ դուռս բանալու: Ա՛յն ատեն միայն տեսայ որ այդ սենեակը պատուհա՛ն մը, ծա՛կ մը անգամ չունէր: Կատարեալ տուփ մը:

Գիշերը չխեղդուիլս ալ հրա՛ջք մը պարզապէս: Ոսկեգօծ քաղաքներու գնահատութեան մէջ այս փաստն ալ մի՛ մոռնար:

Դուրսը կէսօր էր: Շիտա՛կ խենթիս հասցէին գացի ու տանը դիմաց ճաշարան մը նստայ: Խորհրդաւոր դուռը բացուեցաւ, գլխուն վրայ կարմիր ֆէտով մարդ մը երեցաւ , մօտեցայ ու բարեւեցի:

– Աստուծո՛ւ բարին, ինչպէ՛ս էք , – ըսաւ այնպիսի անտարբեր ձեւով մը, որ կարծես օրը տասն անգամ կը տեսնէր զիս:

Ճեսս ճաշի նստաւ. հին բարեկամներու պէս, ասդիէն-անդիէն խօսեցանք: Ճիշդ է որ իր ուռեցած ականջները իրեն դէմքին ասպուշ թանձրութիւն մը կու տային, բայց խենթ մը չէր այդ մարդը, հազա՛ր անգամ ո՛չ: Գաղտնիքին բանալին գտնել կարծեցի՝ իր հետ կիներու մասին խօսելով, երեսը թթուեցուց. խաղարաններուն ականարկութիւն ըրի, ուսերը թօթուեց: Արդէն շուարած, աւելի շփոթեցայ: Հապա եթէ սխալ մարդու օձիքէն բռնած ըլլայի՛...:

Ամուսնացած մարդ մըն էր. ինծի երկար-բարակ իր կնոջ վրայ խօսեցաւ՝ որ քիչ մը տկար ըլլալուն, այդ օրը միասին չէ կրցած ելլել. իր մեծ տղուն համար ինձմէ գուիցերիական վարժարանի մը հասցէն ուզեց. պզտիկ տղայ մըն ալ ունէր, շատ պզտիկ, որ այս օրերս ակռայ հանելուն՝ փորը քիչ մը թոյլ էր...:

Յետո՛յ միայն գիտցայ որ այս մարդը ո՛չ կին, ո՛չ գաւակ ունէր, այլ պարզապէս ստելու փափաք մը. բայց բոլորովին բնական, անշահախնդիր, անվնաս սուտեր. արուեստը՝ արուեստին համար:

– Ծնողքիդ նամանկ մը գրեր ես , – ըսի անհամարձակ:

– Չե՛մ յիշեր , – ըսաւ:

– Դրամներդ խաղարաններու մէջ կերեր ես:

– Մխա՛լ է:

– Հապա ո՞ր գացին ոսկիներդ:

– Տորեկները պաղպաղակ մը կ'ուտէի...:

– Հարստութիւնդ միայն պաղպաղակով հատցուցիր:

– Առտուններն ալ կաթ մը կը խմէի , – թոթովեց. աչքերը լեցան, մօրուքին մէջ արցունքներ գլտորեցան: Մեղքցայ իրեն, գոջացի: Մարդը իր դրամը կերեր էր. ես ի՞նչ կը խառնուէի...: Բայց ան այսպէս չէր խորհեր, կ'ուզէր իր լացովը զիս համոզել իր անմեղութեանը վրայ, կ'ուզէր որ անպատճառ հաւատամ թէ ինք պարկեշտ մարդ մըն էր. ո՛չ կինը, ո՛չ զինին, ո՛չ խաղը չէին հրապուրած զայն (ու այս ճի՛շդ էր)...: Բայց մարդիկ չար էին, իր գէշութիւնը կ'ուզէին, փողոցէն անցած ատեն խորհրդաւոր կերպով իրարու աչք կ'ընէին. (աս ալ ճիշդ էր, բայց իր գլխուն ֆէսին համար էր): Շատեր զինքը սնանկացնելու, կախաղան հանելու կը ջանային, աշխարհիս ամէն ծայրերէն անվերջանալի ու անկարելի հաշիւներ կը դրկէին՝ իր բնա՛ւ չճանչցած մարդերէն...: Ա՛ս ալ ճիշդ էր, ու ահա թէ ի՞նչպէս...:

Այս խելօքիկ մարդը երբեմն-երբեմն իր մեծութեան երագներն ունէր. բայց մեծ ըսածս՝ շա՛տ մեծ, խելքի մտքի մէջ չսեղմող մեծութիւն մը: Քանի որ բոլոր մարդիկ իրմո՛վ կը զբաղէին ու դաւադրութիւններ կը սարքէին իր շուրջը, ուրեմն կրնար ըլլալ որ անգիտակցաբար ինք նշանատր անձ մը ըլլար, ո՞վ զիտէ, թերեւս ապագայ թագաւոր մը...: Այս մարդը իր երագին հաւատալու դժբախտութիւնն ունէր. ու այս տեսակ հիւանդներու բնական տրամաբանութիւնով, կ'ուզէր իր պզտիկ կեանքը այդ մե՛ծ գաղափարին պատշաճեցնել կանխաւ...: Իր բանակին համար ֆրանսական գործարանի մը իշու լաւագոյն կաշիէն թմբուկներ կ'ապսպրէր՝ բայց ա՛յնքան թիով՝ որքան էջ չկար աշխարհիս երեսը... եթէ այդ անունով միմիայն համեստ չորքոտանիներուն կ'ակնարկէր: Գերմանիոյ կայսեր ինքնագիր նամակ մը կը գրէր՝ անոր պզտիկ աղջկան ձեռքը խնդրելու համար: Բայց այդ մեծ ամուսնութեան արժանավայել պալատ մըն ալ պէտք էր: Մոնթէ Քարլոյի բարձունքներուն վրայ սքանչելի ծախու ապարանք մը տեսեր, ու ամենայն պաղարիւնութեամբ, առանց սակարկութեան , թագաւորի վայել ձեւով ստորագրութիւն մը նետեր էր՝ գնելու խոստումի մը տակ:

Այդ օրէն ի վեր գործերը գէշցեր էին, սուտ ու փուճ օրէնքներով իրմէ ահագին դրամներ կը պահանջէին տան մը համար՝ որ գնած չէր, պա՛րզ ստորագրութիւն մը միայն... : Ուրեմն իրա՛ւ այնքան մեծ արժէք ունէր իր մէկ ստորագրութիւնը:

Այսպիսի մեծամոլութիւններու մէջ հատուցներ էր դրամները, ու նորերը գտնելու համար այլանդակ շահադիտութիւններու մէջ կ'իյնար:

Գիտնականի մը ապսպրեր էր որ իր հաշուոյն արուեստական բրինձի գիտին աշխատի:

Օր մը կարդալով որ Սթրատիվարիոս ջութակ մը հագարատոր ոսկիի ծախուեր էր՝ իսկոյն գրեր էր իտալական գործարանի մը, որ իրեն 12 տուղէն Սթրատիվարիոսներ հայթայթեն՝ տասը տարի վերջ տասնապատիկ գիներով ծախելու համար: Ու գործարանին ամիս մը պայմանաժամ տուեր էր. բայց այդ պայմանաժամին մէջ ինք բոլորովին ուրիշ բաներու վրայ կը նտածէր, ու բացարձակապէս կը նոռնար ջութակները:

Այդ բոլոր մեծաքանակ ապսպրանքներէն միայն երկո՛ւ բան պահած էր իրեն՝ որ սենեակին մէջ տեսայ: Ահագի՛ն, անծա՛յր-անվե՛րջ շուան մը որ շուարեցուց գիս:

– Ծովերուն լայնութիւնն ու խորութիւնը պիտի չափես , – ըսի:

– Ո՛չ , – ըսաւ պաղարիւնութեամբ , – այստեղ անվստահելի երկիր է, եթէ սենեակը գան՝ պատուհանէն փախչելու համար է:

Բայց ես գիտէի որ դարձեա՛լ կը ստէր, իր սովորութեան համաձայն, այդ անհատնում շուանը ինքզինքը ձեղունէն կախելու համար էր...:

Ու սնտուկ մը բացաւ. մէջը ի՞նչ կը կարծէք որ ըլլար. ածելիներ՝, ածելիներ՝, անթի՛ւ, անհամա՛ր, բոլորն ալ իրարու նման ածելիներու լեռ մը...: Ես գարմանքէ գարմանք կ'իյնայի՛ երբ ան միեւնոյն մեծութեամբ ուրիշ սնտուկ մըն ալ բացաւ՝ բերնէ բերան յար եւ նման ածելիներով լեցուն:

– Ասոնք սրցուածներն են , – ըսաւ:

Ասոր վրայ շատ չայնդեցի, դուրս ելայ: Ահա մարդ մը որ գիշերները հագարատոր ածելիներ կը սրցնէր, ու ցերեկները խելօք-խելօք եւ ազատ-համարձակ փողոցներուն մէջ կը պտտէր. մինչեւ որ անմեղ մը չմեղցնէր՝ Օրէնքը գայն յիմարանոց շէր կրնար նետել. որո՞ւ փոյթ թէ այլանդակ գնումներով փճացուցած ըլլար իր հարստութիւնը. ան կէս-խենթն էր. արդէն բժշկութիւնն ալ խենթութիւն չանուաներ այս հիւանդութիւնը: Իր յիշողութեան կորուստը, իր ըրածներուն մանկական տարօրինակութիւնը, իր աւելորդ ստախօսութիւնը, իր յաշորդական մեծամոլութիւնն ու մենամոլութիւնը, ու մանաւանդ իր խօսելու դժուարութիւնը եւ իր թափփած բառերը, իր գիրերուն պէս՝ լեզուին ու մատներուն ալ դողալը, շատ որոշ հիւանդութեան մը անունը կ'արթնցնէին մտքիս մէջ:

Ինչպէ՞ս սկսեր էր այդ հիւանդութիւնը. ոչ թէ յանկարծակի (ինչպէս ծնողքը կը գրէին), այլ ամիսներու ընթացքին: Բարեկիրթ մարդ մըն էր ան, որ քիչ-քիչ իր բնութիւնը փոխեց: Նախ մելամաղձոտ դարձաւ, սենեակին մէջ բանտարկուած՝ օրը հարիւր սիկարէթ կ'այրէր ու կը մարէր. յետոյ բարկացոտ դարձաւ, ընտիր հասարակութեան մէջ յանկարծ զգուելի շարժում մը կ'ընէր, գարշելի բառ մը կ'արտասանէր: Ծնողքը նախամեծար համարեցին գայն ճամբորդութեան պատրուակով տունէն հեռացնել, ու մինչեւ որ վերոյիջեալ նամակը չստացան՝ խենթ ըլլալը չգուշակեցին: Արդէն ծնողները ա՛յդպէս են. ա՛յնքան երկար ատեն որ դրամին շուղես՝ խելացութեանդ վրայ չեն կասկածիր...:

Փարալիզի Ժեներոկն էր այս հիւանդութիւնը, քոյրը այն միւս սարսափելի հիւանդութեան՝ որ թապէս կը կոչուի, եւ որոնց երկուքին ալ հայրը հինգամ սիֆիլիզ մըն է: Բայց նախ պէտք էր ստուգել որ այս վերջին ախտը ընդունա՞ծ էր ժամանակին...:

– Այո , – ըսաւ , – անանկ բան մը կար... հի՛ն պատմութիւն:

Արիւնին ու մարմինին քննութիւնը կասկած չձգեցին. դարմանելն անկարելի էր, ընելիքս պա՛րզ: Զինքը շոգենաւի մը բժիշկին յանձնելով՝ շիտակ Պոլիս դրկեցի: Ես ա՛լ մինակ մնացած՝ քիչ մը ատեն հանգչեցայ այդ սքանչելի քաղաքին մէջ: Վերադարձիս՝ շոգեկառքին մէջ նորէ՛ն կարդացի նշանատր նամակը ու նորէ՛ն երեսակայեցի այդ խենթը, բայց այս անգամ ո՛չ թէ

տարտամօրէն, հապա շա՛տ որոշ կերպով՝ այնպէս ինչպէս մօտաւոր ապագայի մը մէջ պիտի ըլլար ան, անխուսափելիօրէն:

Ուղեղը իր այդ վերջին ու տարօրինակ լոյսերէն վերջ՝ բոլորովին պիտի խաւարէր, սեփ-սեփ (առջի գիշերուան սենեակիս պէս), ապուշութիւնը կատարեալ պիտի ըլլար, շարժումները անկարելի, անկողնին պիտի գամուէր, լեզուն պիտի կորսնցնէր, ուտելը պիտի մոռնար, օրը քսան սաւան պիտի աղտոտէր, օր մը պիտի գար ուր ալ գայն կերակրելն ալ անկարելի պիտի ըլլար, իր է՛ն սիրելիներուն գարշելի պիտի դառնար, պիտի նեխէր... ու ասիկա՛ անխուսափելիօրէն:

Բայց այս պատմութիւնը անակնկալով սկսաւ եւ անակնկալով ալ պիտի վերջանար: Տուն դարձիս՝ Պոլսէն նամակ մը գտայ, ուր ինծի կ'իմացնէին որ խենթը՝ հոն հասած օրն իսկ՝ հագիւ բժիշկին հսկողութենէն ազատած՝ հորը նետուեր էր... Կարծես դիտմամբ՝ իմ անխուսափելի գուշակութիւններս գուր հանելու համար:

Բնութիւնը, որ ամէն շարիքին քով բարիք մըն ալ դրած է, այս սարսափելի ախտին քով՝ իր դարմանն ալ ցոյց տուեր է. այս հիւանդները գիշեր-ցերեկ մէ՛կ բան կը մտածեն՝ անձնասպանութիւնը: Բժիշկները որ ուրիշ դարման մը չեն գտած՝ կը բաւականանան արգիլելով այդ բնական հակումը: Մակայն, լաւագոյն չէ՞ հոր մը աղտոտել քան տարիներով նուիրական բոյն մը թունաւորել:

Ու հիմա կը յիշեմ դեռ այն օրը՝ երբ մօրութիւն մէջ խոշոր արցունքներ կը գլտորցնէր՝ գիս համոզելու համար որ ինք բարի ու խելօք մարդ մըն էր...: Ալ կը հաւատամ քեզի , խեղճ մարդ. դուն չես ստեր: Ստողները անո՛նք են որ քու հոգւոյդ կորստեան վրայ կոկորդիլոսի արցունքներ կը թափեն...:

Թող կրօնագէտներն ու բարոյագէտները անձնասպանութեան վրայ վիճին. թող իմաստասիրական հատորներ արձակեն իրարու գլխուն. մէկը պիտի գտնուի՞ ինծի բացատրելու համար որ մարմնապէս ու հոգեպէս ի՞նչ պիտի արժէր այդ կեանքը, խօսելու, զգալու, շարժելու, սնանելու, մտածելու անկարող, մէզի մէջ փտած մսի կտոր մը՝ որ շանը նետես չ'ուտեր...:

Լօզան , 1913

Ապրիլը յաղթել է (մահուան դէմ պայքարը)

ԱՊՐԻԼԸ ՅԱՂԹԵԼ Է (Մահուան դէմ պայքարը)

Ո՛վ մարդ, մտածա՛ծ ես երբեք այն հրաշալի բանին վրայ որ կեանքն է:

Կըսեն թէ համբոյրներ կան որ վա՛րդ կը ծօցնեն: Վարդն ի՛նչ է որ. համբոյրներ կան որ մարդ կը ծնցնեն:

Ծոնդնե՛ր, ուսուցէք ձեր տղաներուն թէ իրենց մէջ Աստուած մը կը քնանայ:

Ու վա՛յ անոր որ մութ անկիւններու մէջ կը խաթարէ, կ'աղտոտէ, կը թունաւորէ կեանքի գործիքը: Այդպիսին դժբա՛խտ հայր մը պիտի ըլլայ, եթէ երբե՛ք հայր ըլլայ...:

Ապաժառանգ, պակասաւոր , ցաւագար, մելամաղձոտ, այսահար, ախտագին զաւակներուն հաշիւը գինեմոլ եւ ցովակեաց հայրերո՛ւն հարցուր...:

Այնքա՛ն փափուկ է սիրոյ պտուղը:

Խաւարի մէջ բանտուած այդ փոքրիկ մարմինը ո՛չ կը տեսնէ, ո՛չ կը լսէ, ո՛չ կը խօսի, ո՛չ կը շնչէ: Բայց այդ մտի կտորը բոլոր սրտերէն աւելի զգայուն է:

Այդ ապագայ կեանքը՝ մայրական տխրութենէ մը իր ամբո՛ղջ ճակատագրով կ'ազդուի: Մօրը սրտին մէ՛ն մի կոշը իր փոքր սրտին մէջ կ'արձագանգէ: Ան ցաւէ՛ մը, խոցէ՛ մը, ոչինչէ՛ մը կրնայ մեռնիլ մօր կենդանի արգանդին մէջ...:

Բայց պիտի ապրի՛: Ու ահա՛ վճռական ժամը. տառապանքի ու յոյսի այն փոթորկալի՛ ժամը՝ ուր զակի մը ծնունդը ու մօր մը՝ մահը նժարին երկու աշերտուն մէջ գիրա՛ր կը կշռեն, վարանոտ տատանումներով...:

Այրը արդէն հեռացաւ , մեղաւոր անասունի մը պէս: Մարսափահար կինը միայնակ է այն խոշոր Անծանօթին առջեւ, որ իր արիւնէն սնուց, եւ որ վայրկեանէ մը պիտի մեռցնէ զինք զուցէ...:

Որքա՛ն երանելի է սակայն այսօրուան երեխան. ան այժմ կրնա՛յ հասկցնել իր լեզուն , կրնա՛յ արտաքին աշխարհի հետ յարաբերութեան մտնել...:

Կը տեսնե՛ս սա Գիտութեան մարդը որ գլուխը մօր որովայնին վրայ հակած՝ մանուկին սիրտը կ'ունկնդրէ: Մանուկն անոր ականջին կանխա՛ւ կը պատմէ իր տարիքը, իր հասակը, իր առողջութիւնը, իր ի՛նչպէս ծնելու դիտաւորութիւնը,– գլխո՛վ, ձեռքո՛վ թէ ոտքով աշխարհ զալու իր որոշումը...:

Ու ահա ծնաւ:

Բայց որքա՛ն սիրուն է այս Անծանօթը որմէ մայրը կը վախճար...:

Մէ՛կ էին, երկո՛ւք եղան, ու իրարու կը ժպտի՛ն...:

Աստղ մըն էր որ աշխարհ ինկաւ: Սակայն երկինքէն իջնող այս հրեշտակին համար որքա՛ն դառնութիւններ ունի երկիրը: Հացի փշուր մը բաւական է զայն խեղդելու: Պիտի կրնա՞յ ապրիլ, թէ միայն հի՛ւր է...:

Հարսանիքի, կեղծ-մաշկի, կապոյտ հագի, չառատենդի, ուղեղատապի գոհերուն հաշիւը սգաւոր մայրերո՛ւն հարցուր...:

Եթէ ուժեղ է՝ պիտի յաղթէ՛ ու պիտի ապրի:

Բոլոր ախտերուն եւ մահերուն մէջէն այդ կենսունակ մակոյտը իր ճամբա՛ն պիտի բանայ: Այդ դողոքուն էակը, գոր բզէ՛զ մը բաւական է մեռցնելու՝ բոլոր դժուարութիւններուն պիտի յաղթէ, պիտի ուռճանայ, պիտի մեծնայ, թագաւոր պիտի ըլլայ...:

Ու ո՛չ թէ աշխարհագրական կէտի մը թագաւորը. ամբողջ կենդանական ցեղերուն, շնչաւոր եւ անշունչ էակներուն թագաւորը:

Երեկուան գառնուկը այսօր առիծնե՛րը պիտի դողացնէ ու վանդակներու մէջ պիտի բանտէ գանոնք իր զբօսանքին համար:

Լեռներուն պիտի հրամայէ որ խոնարհի՛ն , եթէ ո՛չ՝ անոնց փորոտիքին մէջէն պիտի անցընէ իր երկաթէ ճամբան:

Երկինքին պիտի հրամայէ որ լռէ՛. եթէ ո՛չ շանթարգելով մը պիտի վիժեցնէ անհնազանդ տարրերուն կատաղութիւնը, թնդանօթով մը պիտի փարատէ ամպի ծոցին մէջէն սպառնացող կարկուտը...:

Երկրին արգանդէն խաւարին ոգիները դո՛ւրս պիտի կանչէ, անկերպարան մետաղներուն պիտի հրամայէ որ ծռին, ձեւ առնեն ու աշխատի՛ն իրեն համար:

Արարչութեան կարգն ու սարքը պիտի փոխէ: Բնութիւնը գայն հողի՛ն դատապարտած էր, ան ծովերուն եւ օդերուն պիտի իշխէ:

Ովկիաններու մէջտեղը թաւալող անդրջրհեղեղեան լեռնանման վիշա՛պը պիտի հալածէ: Ամպերէն վեր ճախրող արծի՛ւր պիտի սարսափեցնէ իր սրընթաց սաւառնակին վրայ թառած...:

Ահաւասիկ թագաւորը, տիեզերքին թագաւորը...:

Բայց որքա՛ն տկար, ո՛րքան խղճալի է ան...:

Ան որ երէկ օդերուն մէջ կ'արշաւէր, այսօր սողունի մը պէս անկողին գամուե՛ր է, խղղուկ-խղղուկ կը հագայ...: Աներեւոյթ թշնամիներ իր կոկորդը լեցուցեր, իր շունչը կղպեր են...:

Թագաւորը պիտի մեռնի՛, ու չի՛ հասկնար թէ ո՞վ է գայն մեռցնողը...:

Մերունդէ սերունդ վայրի գագաններ կոտորեց: Թունաւոր գետունները անհետացուց իր բնակութենէն, մարդասպաններու համար օրէնքներ շինեց, ու չուաններու ծայրէն կախեց անհնազանդները...: Ո՞վ է ուրեմն թշնամին, ո՞րկէ մտաւ...:

Բայց կը տեսնե՞ս դուն նորէն սա գիտութեան մարդը, որ հիւանդին վրայ փափկութեամբ կը ծռի, աննշան սրսկում մը կ'ընէ սրունքին մէջ, վայրկենաբար միլիոնաւոր մանրէները կոկորդին մէջ կը մեռնին, ու, կեցցէ՛ թագաւորը...:

Ան մինչեւ այժմ միա՛յն տեսանելի թշնամիներուն դէմ պայքար մղեր էր. հիմա նոր խաչակրութիւն մը կը սկսի՝ անտեսանելիներուն դէմ...:

Որո՞նք են այդ խաչակրութեան գորապետներն ու իշխանները:

Անոնք ոսկեճամուկ գարդեր չունին: Մուսերի տեղ սուր դանակ մը, ատրճանակի տեղ մանրադիտակ մը կայ ձեռքերնին:

Մոլիերին հեզնած բժիշկները որ դեռ երէկ արքաներուն աղիքները լուսլո՛ւ միայն կ'ապրէին, այսօր ամբողջ երկրագունտի վրայ ձեռք ձեռքի տուեր են, համամարդկային Կեանքին պաշտօնեաները, վերջնական Յաղթութեան յուսատուները եղեր են:

Կը տեսնե՞ս սա ծերունին, որ կատաղած շունին երախէն ունպ մը լորձունք կը հաւաքէ քննելո՛ւ համար:

Կը տեսնե՞ս սա երիտասարդը, որ չա՛ր աշխարհներու մէջ կը մեռնի՝ հնդկախտին գաղտնիքը յափշտակելու համար:

Կը տեսնե՞ս սա նոր Պրոմէթէոսը , որ խաւարին ծոցէն ռատիումը գողնալով՝ իր ձեռքերը կ'այրէ այդ մոգական հուրէն:

Կը տեսնե՞ս սա հայ գիտունն ալ, որ Ռէօնթկենեան ճառագայթներուն գիտակից գոհը կ'ըլլայ Նոր-Աշխարհին մէջ:

Բայց դեռ ի՛նչ անանուն բժիշկներ կան որ ուրիշներո՛ւ կեանքին համար կը մեռնին , անգիտացուա՛ծ...:

Արդի՞ւնքը...:

Մոռցա՛ր ուրեմն այն օրերը ուր ամբողջ ժողովուրդ մը, իր արքաներով ու ասպետներով վերքերու մէջ կը փտէր: Այդ քսան հազար բորոտնոցներէն, որոնք Եւրոպայի մակերեսը կը ծածկէին՝ այսօր հա՛տ մը իսկ չէ մնացեր...:

Ժանտախտը, Ծաղկախտը, Հնդկախտը՝ դժոխքէն փախած այդ երեք աստուածները, որոնք մէկ տարուան մէջ անթիւ բանակ մը սրէ կ'անցընեն՝ ա՛լ չեն գօրեր ոտք կոխելու այս անձայրածիր Եւրոպան գոր բժիշկներ՛ը կը պաշարեն:

Անոնք պահակներու պէս կը հսկեն քաղաքակրթութեան սահմանագլուխին վրայ: Ու որպէսզի ժողովուրդներ կարենան հանգի՛ստ քնանալ՝ իրենք անքո՛ւն կը սպասեն խրամատին վրայ, նենգ թշնամիին դէմ ճակատ ճակատի...:

Այս անհաւասար կռուին մէջ՝ որ անզէ՛ն մարդը կատղած աստուածներուն դէմ կը մղէ, յաղթութիւնը մե՛րը պիտի ըլլայ...:

Առջի օր Օտղկախտն ու Կեղծմաշկը անձնատուր եղան: Երէկ Կատաղութիւնը խելօքցաւ: Այսօր Ժանտատենդն ու Ֆրանկախտը յաղթուելու վրայ են: Վաղը Թորքախտին է կարգը...:

Յիշէ՛ Սպարթացի մօր խօսքը.– «Վահանո՛վդ կամ վահանի՛դ վրայ»: Պիտի յաղթես կամ պիտի յաղթուիս, ուրիշ ճար չկայ...:

Բժիշկնե՛ր, սորվեցուցէք ձեր հիւանդներուն, որ քաջ ըլլան ապրիլը յաղթել է: Յուսահատներուն համար այս կեանքին մէջ տեղ չկայ...:

Վա՛յ հոգեւոր ու մարմնատուր տկարներուն, վա՛յ երկչոտներուն, վա՛յ յոռետեսներուն, վա՛յ թերահաւատներուն: Վատերուն համար այս աշխարհին մէջ տեղ չկայ...:

Յոգնա՞ծ ես՝ տո՛ւր ինձի քու ձեռքդ: Որովհետեւ եթէ կեանքի պայքարը տիեզերական օրէնք է, իրերօգնութիւնն ալ կենդանական բնա՛զդ է:

Մենք երգելո՛վ երթանք Վաղուան:

«Մահուան » չե՛մ ըսեր, որովհետեւ հիւանդութենէ մը մեռնիլը այնքա՛ն անբնական ու անիրաւ է, որքան արկածէ մը մեռնիլը:

Բոլո՛ր երկիրներու ախտատուրներ, իրարո՛ւ միացէք, ձեռք ձեռքի տուէք, կազմակերպուցէք մե՛ծ յաղթութեան, Կեանքի՛ն յաղթութեան համար...:

Յառա՛ջ. ապրիլը յաղթե՛լ է...:

Լօզան, 1913

Տէր ողորմեա...

ՏԷՐ ՈՂՈՐՄԵԱ...

– Չէրքէզը տեսա՞ք , Տոքթօր...:

– Ի՞նչ չէրքէզ...:

– Չեմ գիտեր... ինծի այնպէս թուեցաւ... որքան կրցայ հասկնալ իր շարժումներէն, ճի՛շդ այս ժամուն համար ձեզի հետ ժամադրութիւն մը կը խնդրէր:

– Անունը չարձանագրե՞ց...

– Գրել չի գիտեր , Տոքթօր...:

– Բացատրութիւն մը չտուա՞ւ...:

– Լեզու չի գիտեր , Տոքթօր...:

Չէրքէ՞զ մը, անգիր ու անլեզու, ան ալ Երոպայի ճիշդ կեդրոնը...: Անապատներէն շեղելով քաղաքի մը փողոցներուն մէջ թափառող առիծ մը աւելի տարօրինակ չէր կրնար ըլլալ:

Ու ան ի՛նչ առիծ, ան ի՛նչ շքեղ անասուն, տեսնելիք բա՛ն էր: Ժամադրավայրին վրայ հեռուն արդէն որոշեցի գինքը: Եթէ բիրաւոր բազմութեան մը մէջ ալ թաղէին գայն, դիտողին աչքը ամենէն առաջ ու առանց վարանումի, ուղղակի իրեն վրայ պիտի իյնար:

Լեռնցի հսկայի ահագին կերտուած մը. երկար ծալքերով լայն ու անհատնում վերարկու մը՝ որ արծաթէ նեղ գօտի մը մէջքին վրայ կը սեղմէր. անընկճելի ու հպարտ ուսեր՝ որ չէին ծռած, ու վերէն կ'իշխէին կորաքամակ քաղքենիներու բազմութեան վրայ. թաւուտ մօրուք մը, որ ամբողջ դէմքը կը ծածկէր: Ու այս բոլորին վրայ, վերը, սուշտակէ բարձր ու սուր գտակ մը, ուղտի մորթէ:

Վազվզող փոքրիկ մարդոց հոսանքին մէջ ան կը սպասէր անշա՛րժ, շփոթա՛ծ, արհամարհո՛տ: Թեւերը իրանին վրայ ծալած էր, հաւնոցի մը մէջ բանտուած արծիւի մը պէս...:

Ի՞նչ բան ստիպէր էր այս տիտանը Ասիոյ լեռներէն գաղթելու դէպի քաղաքակրթութեան այս կեդրոնները՝ որ կ'ատէր հպարտ անասունի իր նայուածքին մէջ:

Իր երեք ձագուկները հետն առած, – իւրաքանչիւրին ձեռքին մէջ մէկ ծրարով ,– Կովկասի չեմ գիտեր ո՛ր անկիւնէն ճամբայ ինկած էր , ու սահմանէ սահման, կայարանէ կայարան, շոգեկառքէ շոգեկառք փոխադրուելով, պատերազմի դրկուող ձիերու պէս մինչեւ հոս հասած:

Իրեն ըսեր էին որ այստեղ բժիշկները հրաշք կը գործեն: Ու ան Լօզան եկեր էր՝ այն հաստատ հաւատքով որ բաւ էր դարտ մը ցուցնել՝ դարման մը գտնելու համար:

Ուրեմն այս Գողիաթը հիւա՞նդ...:

– Չապա ինչո՞ւ գաւակներդ միասին բերիր, կը հարցնեմ:

– Իրե՛նց համար եկայ, բժի՛շկ... թո՛ղ ես մեռնիմ, իմ կեանքս ի՛նչ է... ես մեղաւոր հայր մըն եմ... բայց փոքրիկներս, բայց փոքրիկներս...:

Ու բառերը կը կոտրտէր, կը ծամծմէր, կը դարձնէր ու նորէն կը կրկնէր իր այլանդակ թուրքերէնով:

Իրա՛ւ ալ, հօր մը համար դիւրին-դիւրին խոստովանուելիք բան մը չէր իր պատմութիւնը: Դեռ իր երիտասարդութեան շրջանին՝ բանակին մէջ ֆրանկախտ մը ստացեր , բայց լոեր, գաղտնի պահեր էր բժիշկներէ: Ու այնպէս կը թուէր որ այդ հսկան հագի՛ւ թէ իր մորթին վրայ զգացեր էր ահաւոր ախտին դրոշմը: Յետոյ ամուսնացեր, բայց երեք գաւակներ ծնելէ վերջ, կինը մեռեր էր, դեռ քսան տարու...:

Ինք չէր ըսեր – ու չէր կրնար գիտնալ – թէ ինչէ՞ն մեռեր էր այդ անմեղ կինը: Բայց տարիներու ընթացքին մէջ, սոսկումով կը դիտէր որ իր երկու մանչերուն ականջները քիչ-քիչ կը խցուէին, կապարի պէս կը ծանրանային: Ուխտատեղի, աղօթք, դեղ , անօգո՛ւտ:

Ինչո՞ւ: Ճարահատ բժիշկ մը իրենց արիւնը քննելով, տեսաւ որ հօրը հիւանդութիւնը գաւակներուն երակին մէջ կը շրջագայէր. այնպէս որ իրենց փոքրիկ սրտին իւրաքանչիւր

գարկը ուրիշ բանի չէր ծառայեր՝ բայց միայն այդ ահաւոր թոյնը մարմնին զանազան բջիջներուն մէջ աւելի՛ եւ աւելի՛ մտցնելու...:

Հիմա աղջնակն ալ սկսեր էր թեթե՛ւ, շա՛տ թեթեւ խուլութիւն մը ցոյց տալ. ու հորը ամբողջ սարսափը այն էր որ մի՛ գուցէ այս վերջինն ալ...:

– Այդ ապագան գուշակելը դիւրին է , – ընդմիջեցի , – բա՛ւ է իր արիւնն ալ քննել:

– Ո՛չ, ո՛չ , – բացագանչեց դեղնելով... – թող այդ մէկին ապագան ալ անյայտ մնար...:

Խուլ տղաքներ ունենալ, այն չէ՛ ցար գլխաւոր, բայց գիտնա՛լ թէ անոնք խուլ են միմիա՛յն իմ մեղքովս, անոր համար որ տասնհինգ տարի առաջ օ՛ր մը տե՛ղ մը ես շնացի՛... շնացի՛...:

Աչքերը թրջեցան, փայլեցան: Ակոսները կճրտացին բերնին մէջ մանրախիճեր փշրելու պէս: Բայց որո՞ւ բարկանար: Այս նախնական մարդը՝ որուն համար վրէժխնդրութիւնը կեանքին գերագո՛յն հպարտութիւնն ու օրէնքն էր՝ այժմ իր վրէժը ուրիշ մէկէն չէր կրնար լուծել, բայց մի՛այն իր անմեղ գաւակներէն...:

– Աստուա՛ծ, Աստուա՛ծ... քու արիւնէդ երախսաներ չունի՞ս դուն... մանուկներուն փշուր մը գութ չունի՞ս դուն...:

Ու գլուխն երերտկալէն ու հասակը ճօճելէն՝ երբ սկսաւ հեռանալ, ես դե՛ռ անշարժ մնացած կը դիտէի լեռնցի տիտանի իր ահագին կերտուածը...: Գ-աճաճ թէ հսկայ, մարդ որքա՛ն փոքր է բնութեան անյեղի ու ահաւոր օրէնքներուն առջեւ:

Այս տեսակցութիւնը տեղի կ'ունենար երէկ: Այսօր, կիրակի, իր հասցէին կը դիմէի: Այդ առիծին ձագուկները իրենց բոյնին մէջ տեսնելու հետաքրքրութիւնը քայլերս կը փութացնէր: Բայց այս ի՛նչ մութ փողոցներ, այս ի՛նչ նեղ տուներ: Այդ օտարական մարդը ինչպէ՛ս գտեր էր այս թշուառութեան օճախները:

Առիծներու բո՛յնը: Տած սենեակ մը, մերկ ու գորշ պատերով: Մենեակին չորս անկիւնները՝ չորս տախտակէ անկողիններ, չորս դագաղներու պէս, գետնէն թիզ մը բարձր: Մենեակին մէջտեղը՝ փոքրիկ սեղան մը, նոյն տախտակէն կտրուած: Մեղանին վրայ՝ քարիղի եփոց մը:

Հիմա կը հասկնամ թէ ինչո՞ւ երէկ կը քաշուէր զիս տուն հրախրելու:

– Ներեցէք ինձի, պարո՛ն բժիշկ: Եթէ մեր երկիրն ըլլար, հարկաւ այսպէս չէի ընդուներ ձեզ: Պանդխտութեան վիճակն է այս: Այս դագաղներն ու այս սեղանն ես եմ շիներ: Տեսէ՛ք, մատներս հագար տեղէ արիւնած են ու ձեռքերս սառ ջուրի մէջ ճաթտելէն կը մզմզան: Կերակուրնին, կարկտաննին , լուացքնին ալ ես կ'ընեմ...: Որբուկներուս մայրութի՛ւն...:

Ու այս բոլորը ինչո՞ւ. ժառանգական ախտի մը համար՝ որուն դարմանն անհնարին էր: Մխալը անգամ մը գործուելէ վերջ՝ անկարելի՛ էր սրբել: Ա՛յ ուզածին չափ մայրութիւն ընէր, տղայութեան սխալը մի՛շտ աւելի պիտի կշռէր նժարին մէջ...:

Դատաւորներու օրէնքին պէս բժշկութիւնն ալ իր օրէնքներն ունի, բայց որքա՛ն աւելի ահաւոր, անդդուելի, անյեղի, վրէժխնդիր օրէնքներ:

Մէ՛կ բան կը մնար ինձի ընել, իրեն խորհուրդ տալ որ ժամ առաջ երկիր վերադառնար: Բայց ան որքա՛ն գէշ կը հասկնար իմ միտքս. իրեն այնպէս կը թուէր որ իր աղքատութեա՛ն համար կը մերժէի դարմանս:

– Փո՛րձ մը, բժի՛շկ, փո՛րձ մը ըրէք...: Բժշկութիւնն ինչո՞ւ մեզի դեղ մը զլանայ...: Եթէ ունեցածս չի բաւեր՝ ամբողջ կեանքովս ես ձեր գերին, ձեր ստրուկը, ձեր պահապանը ըլլամ... փո՛րձ մը, բժի՛շկ, փո՛րձ մը, փո՛րձ մը...:

Յանկարծ լռեց. որովհետեւ դուրսէն դուռ բացուելու ձայն մը լսուեցաւ. տղաքներն էին:

– Յովհաննէ՛ս... Կարապե՛տ... Մարիա՛մ... – գոչեց հայրը:

Թաշկինակին ծայրով աչերը չորցուց ու անգամ մըն ալ ձայնը բարձրացուց.

– Յովհաննէ՛ս... Կարապե՛տ... Մարիա՛մ...:

Մեմին վրայ երկշոտ գլուխ մը երեցաւ, յետոյ ուրիշ մը, յետոյ պզտիկ աղջկան գլուխ մը...: Առիծին ձագերը...: Բայց որքա՛ն խղճալի, որքա՛ն ճոզած, որքա՛ն անարիւն էին այս հսկային գաւակները: Խուլութիւնը՝ իրենց արտայայտութեան զգուշաւոր երկշոտութիւն մը տուեր էր:

– Մի՛ վախնաք, գաւակնե՛րս... նե՛րս մտէք... բժիշկին ձեռքը պագէք... Յովհաննէ՛ս...
Կարապե՛տ... Մարիա՛մ:

Բայց անոնք տեղերնէն չէին երերար: Հայրը գնաց, ձեռքերնէն բոնեց, ներս մտցուց,
ծունկերուն վրայ նստեցուց, շոյեց, համբուրեց:

Այսպէս, քիչ-քիչ դուրսը մութն իջեր էր արդէն. պատուհանները սեւցեր էին, տղաքներուն
պատկելու ժամն եկեր էր:

– Այսօր կիրակի է, գաւակնե՛րս աղօթքնիդ մի՛ մոռնաք:

Երեք որբուկները քով քովի շարուեցան՝ հասակի կարգով, ճիտերնին ծոցին, աչերնին
վեր դարձուցին, ու սկսան աղիողորմ երգել.

Տէ՛ր ողորմեա, Տէ՛ր ողորմեա,

Յիսո՛ւս փրկիչ, մեզ ողորմեա՛:

Այս ի՛նչ երգ, այս ի՛նչ երգ, Աստուա՛ծ: Ու քանի՛ տարի է չէի լսեր այս բարի ու
ահաւոր մեղեդին: Վերէն ի վար սարսուտ մը անցաւ վրայէս, մարմինս փուշ-փուշ եղաւ:
Ի՛նչ տարօրինակ համոզումով կ'երգէին այդ թրքախօս բերանները: Բայց այս բարի, այս
աղաչաւոր, այս գալարուն, այս ահաւոր երգը մե՛ր երգն էր, «Կռունկ»ին պէս, ցեղի՛ն ու հողի՛ն
երգը, գերագոյն տառապանքին ու գերագոյն յոյսին երգը:

Սակայն ի՛նչ ահռելի ծանրութիւններ կը ստանային այդ բառերը մանուկ շրթներու վրայ:

Տո՛ր աշխարհիս խաղաղութիւն,

Մեղաւորաց դարձ եւ գղջում,

Եւ հիւանդաց այցելութիւն, կը հայցէին արծաթաձայն որբուկները, ճիտերնին ծոած:

Մեղաւորաց դա՛րձ եւ գղջում կը կրկնէր հայրը, ձեռքերուն մէջ սեղմելով իր գլուխը:

Տէ՛ր ողորմեա, Տէ՛ր ողորմեա...

Ու ես գիտեմ որ այս գիշեր նորէն, երբ խաւարը լեցնէ այդ ահաւոր սենեակը, ու երբ երեք
որբուկները իրենց անմեղի քունը քնանան մշի՛կ-մշի՛կ, չորրորդ դագաղին մէջ մէկը, իր խղճին
վրայ պիտի հսկէ արթուն,– խուլերուն հայրը:

Լօզան, 1913

Գինովին աղջիկը

ԳԻՆՈՎԻՆ ԱՂՋԻԿԸ

Այդ օրը սոգական ընթերցումներով գլուխս լեցուցի, ու մագնիսական խառնակ մտածումներով փողոց նետուեցայ:

Գլխուս վերեւ գարնանային արեւ մը կար, այն առաջի՛ն արեւներէն՝ որ տաքցնելէ աւելի կը շոյեն, թույցնելէ աւելի կը գինովցնեն:

Արե՛ւ մըն ալ ահա դիմացս. գարնանային աղջիկ մը, անոնցմէ՝ որոնք չեն այրեր՝ այլ հոգին կը գաղջեցնեն, չեն կիզեր՝ այլ կեանք կու տան:

Ուրախութի՛ն մըն էր դիտելը իր կապուտակ աչերը՝ երկնքի պատառներու պէս: Արեւի՛ գոյն սագերը՝ իր ուսերէն աւելի անցորդին աչերը կը շոյէին: Անոր նայելով մարդ վայրկեան մը ինքզինք երջանի՛կ կը գգար ապրելէն, որովհետեւ այդ հասակի աղջիկները՝ երկու տարիներուն մէջտեղը՝ գեղեցկութենէն աւելի բան մը ունին իրենց վրայ...:

Կարելի՞ էր երեւակայել աւելի մեծ սոգութիւն, հրաշք մը, քան այն որ ահա դէմս էր, կը մօտենար, աչքս իր աչերուն մէջ...: Քա՛յլ մըն ալ, ու յանկարծ տժգունեցաւ, ճիշ մը արձակեց եւ ուժգնօրէն ինկաւ՝ երկինքէն ինկող քարի մը նման:

Վագեցի, չէ՛ր շնչեր. ձեռքերը սեղմեցի, չէ՛ր գգար: Երեսը գետնին՝ փայտի մը պէս ինկեր ու արդէն քարացեր էր մեռած թռչունի նման: Թեւերն ու ոտները երկաթի պէս կարծր էին, շի՛փ-շիտակ, մահուան շիտակութիւնովը...:

Բայց ասիկա վայրկեան մը տեսց: Կոնակին վրայ դարձուցի գայն, մարմինը սեղմող կոճակները խլեցի, կապերը թուլցուցի:

Այն ատեն տժգոյն երեսը կարմրեցաւ, կապուտացաւ. ահագին ճիգով դէմքին մկանները կծկտեցան: Լեզուն՝ ակոսներուն մէջ ո՛ւժգնօրէն խառնուած՝ կը գալարէր արիւնտ: Գլուխը սուրճի մը պէս կը ծեծէր սալայատակին քարերը: Ձեռները, ոտները, ամբողջ մարմինը յանկարծ -յանկարծ կը դողային՝ վիզը կտրուած անասունի մը պէս: Աչերը՝ գնդակներու պէս դուրս ցայտած՝ իրենց ճերմակութիւնը ցոյց կու տային ամբոխին, որ եկեր էր ամէն կողմէ, վրայէ վրայ խոնուած, հետաքրքրութիւնով ու երկիւղով լեցուն, կարծես թէ երկինքէն նետուած շար հրեշտակ մը ջախջախուէր այդ ցեխերուն մէջ...:

Յետոյ, գլուխներու մէջէն գլուխ մըն ալ երեւցաւ:

– Ես իր տունը գիտեմ, – ըսաւ, – գինով Սիմոնին աղջիկն է:

Ու ոտներէն, բագուկներէն բռնեցին տարին:

Ու ես կը խորհէի՛: Սհաւասիկ դեռատի աղջիկ մը, գեղեցիկներու մէջ գեղեցիկ, կոյսերու մէջ կոյս, որուն մէկ ժպիտը բաւական էր դառնացած կեանք մը ուրախացնելու: Եւ սակայն, – ինչպէ՛ս ճիշդ կ՛ըսէր պատու մը – ա՛լ թող սպասէ որ մէկը խնդրէ իր փափուկ ձեռքը...: Ի՛նչ փոյթ թէ իր բոլոր բջիջները կեանքով ու երջանակութիւնով լեցուն են հիմա. անիկա դժբախտ պիտի ըլլայ, ուզէ՛ թէ չուզէ՛. ճակատագիր...:

Բայց բնութիւնը իր մէ՛կ ըրածը ծածկելու համար՝ նմանօրինակ ու տարօրինակ ա՛յնքան ուրիշ ցաւեր ալ ստեղծեր է, որ ժամանակ չունիս մէկուն վրայ խորհելու, եթէ ոչ այդ մէ՛կը կրակոտ գամի մը պէս կը մխուէր ուղեղիդ մէջ...: Սուրացող շոգեկառքի մը մէջն ես, հագի՛ւ ժամանակ ունիս պատուհանէդ բան մը տեսնելու, այդ տեսածդ չդատած՝ ուրիշ մը կը յաջորդէ անոր, ու հագա՛ր ուրիշներ: Վարագոյրդ կը գոցես ու քո՛ւ ցաւերուդ վրայ կը խորհիս միայն: Ու ահա՛ կեանքը. կաթիլ մը արցունք, անցուկը՝ մոռցո՛ւկ...:

Այսպէս է մանաւանդ հիւանդանոցի կեանքը: Հոն թշուառութեան տեսարանները ա՛յնքան արագ կը յաջորդեն իրարու, որ բնա՛ւ ժամանակ չունիս խորհելու, եւ սակայն վարագոյրդ ալ չես կրնար գոցել՝ որովհետեւ ձեռքերդ ամէնուն վերքին մէջ պիտի մխես: Նո՛յն օրուան անկողնին մէջ ուր մեռելի մը դիակը դեռ չէ պաղած՝ նոր հիւանդ մը կը պառկի, ապրելու յոյսով...: Նոյն երկաթէ սեղանին վրայ քանիներո՛ւ արիւնը իրար կը խառնուի ամէն օր, ու

կը լերդանայ անկին մը...: Ու այդ բոլոր ցաւերը ա՛յնքան նման են իրարու որ հազի՛ւ թէ կարենայիր զանազանել իրարմէ: Անգամ մը սակայն զարհուրելի պարագայ մը ներկայացաւ:

Ձմրան առտու մը, տաքուկ սենեակիս մէջ նախաճաշս կ'ընէի՝ բոլո՛ր մասնիկներովս վայելելով այն երջանիկ հանգստութեան ժամը, որ առաւօտեան ժամն է հիւանդանոցին մէջ: Յանկարծ մէկը արագ արագ դուռս ծեծեց: Գթութեան քոյրն էր, Մեծ-քոյրը, տարիքոտը: Բոլորովին տժգունամժ՝ ինձի բացատրեց որ այրուած կին մը բերեր ու արդէն իսկ գործողութեան սեղանին վրայ պատկեցուցեր էին: Չարմացայ. այրուածները հագուագիտ չեն. ինչո՞ւ ուրեմն այսքան այլայլեր էր այս կինը որ ահազի՛ն ցաւեր շոյած ըլլալու էր իր ծերունի ձեռքերուն մէջ...:

Իսկոյն վար վազեցի: Գարշելի նեխութիւն մը փռուած էր սեղանին վրայ: Երեսը ծածկեր էին որ հիւանդը չստակայ ինքնիրմէն: Ամբողջ կուրծքը՝ վիզէն մինչեւ որովայնը՝ բաց վերք մըն էր, վերէն վար: Թեւերը ատելի սոսկալի էին, մորթը այրեր, ճարպը հալեր, մկանները սեւեր, բարակցեր, կախուեր էին շուաններու պէս...: Պէտք էր այդ բոլորը մաքրել, կտրել, նետել, ողջը մեռածէն գատել: Բայց մկրատին դպած տեղը արիւնը կը բխէր, մելամի գոյն, թանձրացած կաթիլներով...:

Կրակը կրակով կը մաքրուի: Ու հրաշէկ երկաթը սկսաւ գործել, արիւնի ակերը խարանել, բաց վերքերուն մէջ պտտիլ: Իր կարմիր համբոյրին տակ դեռ կեանքոտ դնդերները կը կծկտէին, որովայնը կը գալարէր, մորթագերծ կուրծքը կ'ելեւէր ցաւագին շարժումներով:

Կոկոն-կոկոն ստինքները այրեր, հալեր էին: Տեղ ատեղ վարդագոյն մորթի պատառներ մնացեր էին դեռ՝ վարդի փրթած թերթերու պէս: Տեղ ատեղ դեղնամած ճարպ մը կ'երեւէր՝ թարախի գոյն, մինչեւ բազուկներուն խոռոչին տակ:

Ճենճերոտ մուխը կը բարձրանար, կը գալարուէր, սենեակը կը լեցնէր. այրուող մսի հոտը թոքերը կը խեղդէր: Գթութեան փոքրիկ քոյրերը մէկիկ ատեղիկ անհետացան՝ արցունքը աչքերնուն մէջ. յետոյ Մեծ քոյրն ալ գնաց՝ թաշկինակը քիթին...:

Չիմա մինակ էինք, ես ու կենդանի դիակը: Եթէ նոյնիսկ գիտութիւնը հրաշք մը ընէր, ինչպէ՛ս պիտի ապրէր, ինչպէ՛ս պիտի շարժէր ան. երկար հոգեվարք մը չափ՛տի ըլլար իր կեանքը: Ա՛խ, ի՛նչ կ'ըլլար որ կարմիր երկաթը սխալմամբ մօտենար, այրէր, ճեղքէր այն խոշոր երակը, որ ահա՛ բազուկին տակ կը տեսնուէր, մե՛րկ, անվթա՛ր, կեանքի՛ տրոփիւններով...: Ո՛չ, ո՛չ, կեանքը նուիրական է...:

Տորեկէն վերջ իր սրահը գացի: Անկողնին քով մարդ մը նստեր էր, ի՛ր հայրը: Գլուխը կախեր էր՝ անբան ու երերուն՝ սարսափած կենդանիի մը պէս: Դողողոջ ձեռքերով աղջկան դէմքը բացաւ, իր ճնոթկած երեսները անոր այտերուն քսեց, համբուրեց, լացաւ...:

Այն ատեն՛ն միայն տեսայ այդ տասնեօթ տարու դէմքը, այդ կապուտակ աչքերը, այդ արեւոտ մազերը: Բայց այս իմ ճանչցած լուսնոտ աղջիկն էր, որ իր ախտին մէկ նոպային՝ կրակին վրայ ինկեր ու այրեր էր:

Երեսին ճերմակ քողը դարձեա՛լ ինկաւ ծերունիին ձեռքերէն...: Ուրեմն գինով Միմոնը ա՛յս էր, ոճրագործը ա՛յս էր, օղիով յագեցած այս գարշահոտ մարմինը՝ որ լուսնոտներու, այսահարներու, պակասատրներու, նզովուածներու սերունդ մը կը հասցնէր...:

Ա՛խ, գիտե՛ն թէ մեզմէ իրաքանչիւրը կը թաթխէ իր շուրթները այդ թոյնին մէջ. գիտեմ թէ դժուար է փշրել «անուշ անմահութեան» մը համար հրամցուած բաժակ մը. գիտեմ թէ ամէն գինովի գաւակ լուսնոտ չէ. բայց այս մէ՛կը բաւական չէ՞ր բոլոր գինեմուտները նոյն ոճրին մէջ թաթխելու...:

Ու գոհը այս դժբախտ աղջիկն էր, լուսնո՛տը: Միշտ կը յիշեմ փոքր հասակիս տեսած ըլլալ տպաւորիչ պատկեր մը՝ ուր լուսնոտ կոյս մը, լուսնակ լոյսին, ձեռներն երկինք երկարած, ինքն իր վրայ կը դառնար, երկրէն երկինք նետուիլ ուզող բանաստեղծական հսկայ ծաղիկի մը պէս...:

Ո՛չ. լուսնոտը այս էր, ա՛յս մորթագերծ ու ճենճերոտ մարմինը՝ որուն վրայէն ուրեմն, վերէն ի վար խոշոր դող մը կ'անցնէր, ամբողջ անկողինը սարսաղացնելով. այն ատեն սրահին միւս հիւանդները իրենց վերմակին տակ կը կծկտէին, ցաւերնին մոռցա՛ծ: Ու երբեմն ալ, երբ այդ մեռած միսերուն մէջ դեռ կենդանի ջիղերը կ'արթննային՝ մէ՛կ ճիշ մը կը թոշէր իր բերնէն,

բայց ահագին ու անկարելի՛ ճիշ մը՝ որ բոլոր սրտերը դանակի պէս կը ճեղքէր, պատերուն մէջ կը թափանցէր, գետնափոր յարկին սիւները կը դողացնէր, ամբողջ հիւանդանոցը վայրկեան մը իր սարսափովը կը լեցնէր՝ յետոյ յանկա՛րծ մահուան լռութեան մէջ թաղելու համար այդ հսկայական շէնքը:

– Աստուած ընդունի իր հոգին, կու լար Մեծ քոյրը ծնկաչոք. մահէն աւելի գէշը կայ...:

Գիշերը դեռ երկար ատեն կը շարունակուէին այդ սարսափելի ճիշերը ընդհատ ընդհատ: Ննջասենեակիս մէջ պառկած՝ չէի կրնար աչերս գոցել: Այդ բողոքի աղաղակները կոկորդս կը խրուէին, շունչս կը խեղդէին: Աստուած իմ, արշալոյսը ե՞րբ պիտի լուսնար...:

Մեւսեւ մտքեր ուղեղս կը պաշարէին: Այս որքա՛ն անարդարութիւն. մէկ կողմէն կը հաւաքեն ամենէն առողջ երիտասարդները՝ պատերազմի մէջ հարիւր հազարներով մեռցնելու համար, միւս կողմէն՝ կը ստիպեն որ բժշկութիւնը գերմարդկային ճիգեր թափէ ապրեցնելու համար տառապագին մսակոյտ մը՝ որ իր բոլոր ուժով մա՛հը կը կանչէ...:

Ու այդ սպիտակ գիշերին մէջ քանի՛ քանի՛ անգամներ ոճրին փորձութիւնը ձեռքս դողացուց. մինչեւ որ վերջապէ՛ս ճիշերը դադրեցան, ու խաւարն ու լռութիւնը լեցուցին Տաւին Տունը:

Առաւօտուն իր մօտ գացի. երեսին քողը անգամ մըն ալ բացի ու լացի:

Այդ գարշահոտ նեխութեան մէջէն իր կապուտակ աչերը հանդա՛րտ կը նայէին՝ աղբիւրներուն վրայ բացուած այն երկնագոյն ծաղիկներուն պէս, որ մի՛ մոռնար զիս կ'ըսեն...:

Վերմակին տակ արիւնն ամբողջ անկողինը լեցուցեր, մակարդեր, սատեր էր արդէն: Կասկածո՛վ իր թելը վերցուցի. այն մերկ երակը փրթեր էր... – փրթա՛ծ թէ փրցուած...:

Լօզան, 1913

Կռունկը

ԿՌՈՒՆԿԸ

Տուրտ-ձմեռ օր մըն էր: Դուրսը սառած հովը մտրակներու պէս կը շաշեր անցորդներու երեսին: Ձիւնն ըսես՝ աչքերը կտրցնելու աստիճան:

Հայրենակցի մը սենեակին մէջ կծկտեր էինք մենք, քանի մը ընկերներ, ամէնքս ալ պանդուխտ: Դուրը ճռաց, ցուրտ հով մը խուժեց սենեակէն ներս: Կարոն էր, գերեզմանէն կու գար:

– Պը՛ռ՛ռ, – ըսաւ, – շա՛ն օդ. ասանկ օրով մարդ կը մեռնի՞...:

Քիչ վերջը, դուրը անգամ մըն ալ բացուեցաւ. քանի մը յետամնաց ընկերներ ալ ներս մտան: Այս ձիւնին տակ սպասած էին որ դիակը ամբողջովին ծածկուէր, նոյնիսկ մէկը՝ մեր բոլորին կողմէ՛ յետին հրաժեշտի քանի մը խօսքեր ալ ըսած էր այդ մենատր գերեզմանատան մէջ, այդ անծանօթ մեռելին վրայ:

Ո՛վ կը ճանչնար, ո՛վ պիտի ճանչնար երբեք հագար ու մէկ բզկտուած էջերը Կեանքի ու Մահուան այն տռամին՝ որ այսօր ձիւններու տակ թաղեցինք, օտարներու փոսին մէջ: Առա՛նց անունի, թոշունի դիակի մը պէս...:

– Ե՛ս ալ չէի ճանչնար ան, – ըսաւ մէջերնէս մէկը. – Բայց պանդուխտին մարդերը հասկցեր էին, որ այդ օտարական հիւանդը Հայ մըն է ու հայ բժիշկ մը կ'ուզէ իր մօտ: Շաբաթ մը յետոյ միայն կրցան գիս գտնել: Երբ իր սենեակէն ներս մտայ՝ պատուհանին փեղկերը գոցուած էին: Սակայն քիչ քիչ այդ մթութեան մէջ դէմք մը գծագրուեցաւ, երկար, անկիւնատր, կանանչի զարնող դեղնութիւնով մը. խաւարով ու լոյսով շինուած Ռ-ամպրանքեան գլուխ մը:

Երկրորդ բանը որ տեսայ այդ սետութեան մէջ՝ ոսկորի գոյն մատներ էին, որ ինծի երկարեցան ու ձեռքերս սեղմեցին՝ կաշոյ խոնաւութիւնով մը: Կարծես թէ ա՛յլ կաթիլ մը արիւն մնացած չըլլար իր մարմինին մէջ: Աչքերը իրենց փայլը արդէն կորսնցուցեր էին. սետութեան մէջ սեւ՝ չէին երեւար:

Երբ ատելի վարժուեցայ այդ կէս մթութեան՝ տեսայ որ մօրուքին վրայ տեղ տեղ կարմիր արիւնը փակեր, թանձրացեր, լերդացեր էր: Մորթուած անասունի տաք շունչ մը կ'ելլէր իր բերնէն, դանդաղ ու խորունկ: Կարծես անտեսանելի դանակ մը ներսէն, վերէն ի վար ճեղքեր էր իր թոքերը:

Ա՛յլ նիթական ի՛նչ դարման կարելի էր տալ այս մարմինին որ գրեթէ մեռեր էր արդէն: Բայց ան խօսելու ճիգ մը ըրաւ, հագը խեղդեց իր խօսքը. խոկացող, խոպոտ հառաչներէն բա՛ռ մը հասկցայ,

– Կռո՛ւնկը...

Ու ես երգեցի իրեն. ո՛վ չի գիտեր կռունկը, բոլոր աշերն ետին մնացած ուղեորներուն կռունկը... ու անդին՝ բոլոր ճիտը ծռած, անվերջ ճամբաներուն սպասողներուն կռունկը...: Ու ինծի այնպէս թուեցաւ որ իր հոգին հովացաւ, զովացաւ, լացաւ...: Իր սրտին բոլոր լուրերը յանձներ էր հաւատարիմ կռունկին...:

Այս պատմութեան վրայ ամէնքս ալ լռեցինք: Սարսափելի՛ բան մը կար ճակատագրին մէջ այս անծանօթ ուսանողին՝ որ հայրենիք դառնալու համար ճամբայ ինկեր, ու ճամբուն վրայ մեռեր, թաղուեր էր իր շտեմած մէկ հողին մէջ...:

Թոքախտը որ հո՛ւն էր, ի՛ր մէջ, դարանակա՛յլ, տարիներէ ի վեր սպասեր էր որ բոլոր յոյսերը իրականանան, բոլոր ուսումները կատարելագործուին ու բոլոր աշխատութիւնները աւարտին՝ ի՛նք սկսելու համար իր ահատր աշխատութիւնը, ու գերագո՛յն ժամուն տալու համար գերագո՛յն հարուածը...: Ա՛յս, զգուելի՛, զգուելի՛ հիւանդութիւնը...:

– Բժի՛շկ, – ըսաւ մէկը, – երբ գերեզմանին մէջ երեսը բացինք՝ մելանի պէս սեւ էր... ինչէ՞ն է...:

Բայց բժիշկը չխօսեցաւ. մա՛րդ չխօսեցաւ:

Լռութիւնը անգամ մըն ալ իջաւ մեր վրայ՝ քարի պէս, ու այս անգամ աւելի՛ ահաւոր քան առաջին անգամը: Այդ սա՛ղը կոտրելու համար.

– Տղա՛քներ, – ըսաւ ուրիշ մը, – վաղը Հայոց Կաղանդն է...:

Բայց Կաղանդին վրայ մտածողն ո՛վ էր: Մենք կը լսէինք ձիւները որ կը թփրտային ապակիին վրայ, կարծես մեռելի՛ն մատները թփրտային մեր ապակիին վրայ...: Այս ցուրտին՝ իր գերեզմանէն փախած՝ մե՛ր մէջ մտնել կ'ուզէր ան: Ու չես գիտեր ի՛նչ մը ունէր սպառնական այդ անանուն ու անծանօթ մեռելը. խորհրդանշան մը ու ազդարարութիւն մըն էր ան մեզի համար...:

Ու իրա՛ւ, իրա՛ւ, այդ պահուն Մահը մեր վրան էր. ա՛յն Մահը որ ուսանողին ու բանուորին, հաւատացողին ու ուրացողին, բժիշկին ու բժշկուողին հաւասարապէս անծանօթ ու սարսափելի է...:

Մե՛նք ալ մա՛րդ պիտի ըլլայինք, կրթութի՛ւն պիտի ստանայինք, լո՛յս պիտի տանէինք մեր խաւար աշխարհին. սո՛ւտ, սո՛ւտ...: Մենէ որո՞ւն շունչին մէջէն չէր շնչեր արդէն դարանակալ մահը...: Իւրաքանչիւրն ինքն իր վրայ կը խորհէր, ինքն իր վրայ կը կասկածէր...:

Ո՛վ պիտի պատմէր ահաւոր մեծութիւնը այս երիտասարդ հոգիներուն, որոնք աղօթքի մը կա՛պն ալ կը մերժէին ողջերուն ու մեռնողներուն միջեւ: Այլապէ՛ս, ամէն մարդ առանձնացեր էր ինքն իր հոգոյն մէջ...:

Սակայն, յանկարծ, մութ անկիւնէ մը դողդո՛ղ ու ցա՛ծ, երգ մը սկսաւ, նախ մէ՛կ բերնով, յետոյ բոլոր շրթունքներէ. բարի ու ահաւոր երգ մը, մահերգի մը պէս աղաչաւոր, աղօթքի մը պէս վեհափառ երգ մը, որ սառը կոտրեց, արցունքները հալեցուց, սրտերը տաքցուց, բոլոր հոգիները, բոլոր հողերը, բոլոր տրտունջները, բոլոր մըմունջները իրա՛ր միացուց.

Ղարիպին սիրտն է խոց, ճիկարն է վարամ,

Կերած հացն է լեղի, ու ջուրն է հարամ...:

Կոո՛ւնկ, կոո՛ւնկ, ամէն աշխարհի անկիւններէ, ամէն սրտի խորշերէ, քա՛նի ծանր լուրեր կապեցին ոտքերուդ, ու դուն կրնա՛ս թռչիլ...: Քանի՛ քանի՛ մահեր կապեցին քու թեւերուդ, կոո՛ւնկ, թեւաւո՛ր հառաչ որ կրնա՛ս թռչիլ...:

Ու երբ բժշկին նշանին վրայ՝ բոլո՛րս մէկ ոտքի կեցանք իբրեւ սուգի նշան, մարմինս փուշ փուշ եղած՝ ես կը խորհէի որ այդ վայրկեանին, հեռունե՛րը, հեռունե՛րը, ծովերով ու լեռներով հեռունե՛րը տեղ մը, ծերուկ մայր մը ու ալեւոր հայր մը, ժպտելով ու յուսալով, ճամբո՛ւն, ճամբո՛ւն կը նայէին. մինչդեռ մենք գիտէինք որ ա՛լ տղան չպիտի գար, չպիտի գա՛ր...:

Եւ այս անգամ, ամէնո՛ւն հետ, բայց դողալո՛վ, ու կարծես մօ՛րն ականջին կ'երգէի ես մահահոտ երգը...: Պանդխտութեան ճամբաներուն վրայ անանուն մեռնողներու ամբո՛ղջ ցեղ մը՝ համայն աշխարհը թունաւորելու չափ դառնութի՛ւն դրեր էր այդ երգին մէջ, ու քարերը լացնելու չափ քաղցրութիւն...:

Լօզան, 1913

Հրաշալի բժշկութիւն

ՀՐԱՇԱԼԻ ԲԺՇԿՈՒԹԻՒՆ

Երիտասարդ բժիշկ, որ մարդը առողջացնելու արուեստին ես նուիրուած, չեմ հարցնէր քեզի թէ կը ճանչնամ արուեստդ, բայց կը ճանչնամ գոնէ մարդը:

Մարդը այն մորթագերծ կարմիր կենդանին չէ՛, որուն դնդերները քննեցիր մարդակազմութեան պատկերներուն վրայ: Մարդը այն մարմնագերծ դեղին կմախքը չէ՛, որուն շարժումները ուսումնասիրեցիր ոսկորներուն վրայ: Մարդը այն շնչագերծ կանանչ դիակը չէ՛, որ ամիսներով քարէ սեղանի մը վրայ պատկեցուցած՝ չափեցիր, կշռեցիր, պատռեցիր, կտրեցիր, յօշոտեցիր, սղոցեցիր, բզկտեցիր, առանց որ անգամ մը բերանը բանար՝ հարցնելու համար թէ «ի՞նչ կ'ընես, բարեկամ...»:

Քեզի հիւանդ մը ցուցնելէ առաջ՝ պատուիրեցին տարիներով դիակներու վրայ աշխատիլ, որպէսզի մարդը ճանչնաս, եւ որպէսզի հոգիդ չդողայ ու խիղճդ չպոռայ:

Երկարօրէն քննելէ, փնտռելէ, պրպտելէ վերջ, գանկին մէջ նեխած ուղեղ մը ու սրտին մէջ սեւցած արիւն մը գտար:

– «Ո՛ր է հոգին, ո՛ր է խիղճը», գոչեցիր ծիծաղելով:

Մա՛ղ, քու ուսումնասիրած մարդդ դիակ մըն է միայն. Ջգուշացի՛ր իրեն նմանելէ: Մարդը որ կ'ապրի, մարդը որ կը խորհի ու կը զգայ, մարդը որուն բարոյական տառապանքները բի՛ր անգամ աւելի են քան ֆիզիքական տառապանքները, այն մարդը ուրիշ քան կը պարունակէ իր մէջ քան ճարպն ու ոսկորը...:

Ամէ՛ն մարդու մէջ Աստուած մը կայ... Ահաւասիկ թէ ի՛նչ քան կը սոռնան քեզի ուսուցանել:

Տաւալի է խոստովանիլ որ այժմու բժշկական վարժարանները կեանքի առաքելայնէր կը պատրաստեն այնպէս՝ ի՛նչպէս զինուորական վարժարանները կը հասցնեն Մահուան պաշտօնեաներ: Սա՛ տարբերութեամբ որ՝ այս վերջինները զինուորին ո՛չ թէ միայն սուր ու հրացան կու տան, այլ անձնուիրութեան, վեհանձնութեան, գոհողութեան ամբողջ դաստիարակութիւն մը: Մինչդեռ դեռատի բժիշկի մը ձեռքը թոյն մը եւ դանակ մը տալէ վերջ՝ կ'արձակեն գայն առանց բարոյական ու հոգեկան ո՛րեւէ պատրաստութեան:

Մարդը իբրեւ միսի ու ոսկորի շարժական գործիք մը ներկայացնելէ վերջ, բժշկութիւնը կը սորվեցնեն այնպէս՝ ինչպէս մեքենագէտներուն կը սորվեցնեն երկաթէ գործարաններուն ուսումը:

Նոզեկան ո՛չ մէկ բառ, բարոյական ո՛չ մէկ ուղղութիւն, անցեալի ո՛չ մէկ յիշողութիւն:

Եւ սակայն հագարներով տարիներ, Փարաւոններու երկրէն մինչեւ Աւետեաց երկիրը, ու Յորդանանէն մինչեւ Գանգէս, միլիոններով մարդիկ հոգեկան բժշկութիւնը միայն կը գործադրէին իրենց ախտերուն դէմ պայքարելու համար: Եւ ամբողջ կրօնքներ հիմնուեցան՝ հրաշքներու հաւատալիքին վրայ:

«Հրաշալիքներու դարը անցաւ» ըսին քեզի, ու ամուր կերպով փակեցին անբացատրելի իրողութիւններու անհանգստացուցիչ դուռները:

Չըլլա՛յ որ նեղմիտներուն հաւատաս: Այն մարդիկը որ ամէն քան գիտնալու յաւակնութիւնն ունին, կը մերժեն ինչ որ իրենց անհասկանալի կը թուի: Աչերնին գոցած կը քնանան, ու աստղերը կ'ուրանան...:

Քանի որ խօսքը աստղերուն է՝ յիշեցնենք թէ մինչեւ 18-րդ դարուն վերջերը, Ֆրանսական Գիտութեանց Կաճառը կը մերժէր ընդունիլ թէ՛ երկինքէն կրնայ քար իյնալ երկրի վրայ...: Ականատես վկաները իբրեւ խենթ ու խաբեբայ կը հռչակէր: Օր մը, քաղաքապետ մը, իր շրջանակին մէջ ինկած երկնաքարէն նմոյշներ դրկած ըլլալով իրեն՝ պատկառելի Ակադեմիան, 1772-ին հրատարակած տեղեկագրով կը յայտարարէր, թէ «եղելութիւնը յայտնապէս կեղծ ու երեւոյթը ֆիզիքապէս անկարելի էր »: Ճշմարտութիւնը իրենց գլխուն մտցնելու համար պէտք եղաւ որ այդ քարերէն մէկը իրենց գլխուն իյնար...: 1864-ի Մայիս

4-ին, ակադեմական Ատոլֆ Պրօնեար քիչ մնաց վախէն մեռնէր՝ երկնաքարի մը անկումին ականատես ըլլալով...:

Նոյնը պիտի պատահէր նաեւ հրաշալի բժշկութեան համար:

Տիեզերահռչակ բժիշկ Շարքօ՝ իր ամբողջ գիտութիւնը քանի մը անբուժելի հիւանդներու վրայ ի գուր փորձելէ վերջ, ի՛նչ մեծ եղաւ իր գարմանքը, երբ անոնք օր մը ուխտատեղի մը երթալով բոլորովին բուժուած վերադարձան...: Այսպէս, մատը վերքին մէջ բռնուելէ վերջ՝ իրապաշտ գիտնականը խոնարհեցաւ ճշմարտութեան առաջ, իրն է հետեւեալ յայտարարութիւնը.

«Գիտութիւնը որ յեղաշրջուելու վրայ է՝ չի կրնար ամէն ինչ բացատրելու յուսկնութիւնն ունենալ, այսպէսով իր բարեշրջումը ժխտած պիտի ըլլար...: Հրաշքները ամէն ատեն գոյութիւն ունեցան՝ իրարմէ բոլորովին տարբեր կրօնքներու ու քաղաքակրթութեանց մէջ, ինչպէս որ այժմ ալ կը կատարուին բոլոր լայնութիւններուն վրայ: Այսպէսով բուժուած հաշմանդամները հարիւրներով կը հաշուին, նոյնիսկ երբեմն պալարներն ու ուռուցքները: Ես տեսայ վերադարձը այն հիւանդներուն, որոնց ես չկրնալով անձամբ հաւատք ներշնչել՝ ուխտատեղի մը գացեր էին. քննեցի իրենց անդամալոյծ անդամները ու ներկայ գտնուեցայ ախտին անյայտացման»:

Լիթրէ իր «Դրական Իմաստասիրութեան» մէջ կը նկարագրէ բազմաթիւ հրաշքներ, որ Մէն -Լուիի գերեզմանին դաչելով կը գործուէին»:

Հռչակատր Տոքթ. Ֆաուլեր կը ներկայացնէ ութը կին հիւանդներ, որոնք ստինքի ուռեցքներ ունէին ու դարմանուեցան հոգեկան բուժումով:

Միայլ հետեւութիւններու տեղի շտալու համար դիտել տանք թէ ո՛րչափ հագուադէպ են գիտապէս վաւերացուած հրաշքները: Սակայն, եթէ հիւանդները իրենց հաւատքը փոխանակ փայտի կտորի մը, սուրբի պատկերի մը, դիակի շիրմի մը վրայ դնելու՝ այդ փրկարար հաւատքը Գիտութեան վրայ դնէին, որքա՛ն պիտի շատնար հրաշալի բուժումներու թիւր...: Ա՛յս է հիւանդներուն տրուելիք պատուերը:

Բայց բժիշկներուն համար ուրի՛շ կենսական պատուեր մը կայ:

Եթէ դուն իրապէս բժիշկ ես, հիւանդներուդ փրկութեան համար՝ իրատունք չունի՛ս ոեւէ միջոց մերժելու այդ նպատակին հասնելու համար: Սահմանափակ ու այլամերժ բժշկութիւն մը գիտակից ոճրագործութիւն մըն է: Պիտի դիմես հնարատր բոլոր ազդակներուն: Դեղն ու դանակը, ջուրն ու կրակը, ելեկտրականութիւնն ու մագնիսականութիւնը, գիտութիւնն ու հաւատքը՝ փոխն ի փոխ քու գէնքերդ պիտի ըլլան. որովհետեւ այն ախտերը որոնց դէմ կը կռուիս, տարբեր հիւանդներու մէջ, տարբեր գէնքերու կը դիմես:

Պիտի հարցնես սակայն թէ կարելի՞ է հրաշքը գիտական հաւատալիքներու կարգը դասել: Անշուշտ կարելի է:

Գերբնական կարծողը հրաշքը այնքան բնական է, որքան երկինքէն ինկող քարը: Միայն թէ՛ գիտունները ժխտելով անոր գոյութիւնը, դեռ չուսումնասիրեցին հրաշագործումի օրէնքները եւ բախտին ձգեցին հրաշքի կատարումը:

Քաջութիւնն ունենանք խոստովանելու թէ հին ազգերը մեզմէ շատ աւելի լաւ կը ճանչնային այս գիտութիւնը: Եգիպտացիներուն, իսրայէլացիներուն, հնդիկներուն պատմութիւնը լեցուն է այսպիսի փաստերով:

Այժմ մեզի համար մութ կը մնայ հրաշագործումի եղանակը, բայց անոր սկզբունքը լոյսի մը նման պարզ է.–

Չանձրոյթի գաղափարը կը յօրանջեցնէ, ամօթի գաղափարը կը կարմրցնէ, գութի գաղափարը կը լացնէ, սարսափի գաղափարը կը դեղնեցնէ, բժշկուելու գաղափարը կը բժշկէ:

«Եթէ,– կ'ըսէ Պարուէլ,– առողջանալու հաստատ համոզումը իշխէ հիւանդին հոգւոյն վրայ, այդ հիւանդը անխուսափելիօրէն պիտի առողջանայ»:

Չոգեկան ազդեցութիւնը այնքա՛ն մեծ է ֆիզիքականին վրայ, որ յանկարծական վախ մը բոլոր շարժումներդ անկարելի կը դարձնէ: Եթէ բուռն յուզում մը կրնայ վայրկենաբար անդամալուծել, աւելի՛ բուռն յուզում մը կրնայ անդամալուծութիւնը վայրկենաբար փարատել:

Ամէն բան կախում ունի՛ բժշկուելու գաղափարը հիւանդին մէջ ներմուծելու արուեստէն:

Ու տեսէք թէ Սրուանձտեան – որ ո՛չ բժիշկ էր, ո՛չ գիտնական, այլ գաւառացի վեղարատր մը – գիտուններու կողմէ կղպուած հրաշքի բժշկութեան դուռները ի՛նչ վսեմ պարզութեամբ կը բանայ.

«Նայէ սա մանուկը, իր երեսներուն վրայ էրէթիկ ջրջրուկ ունի: Սա մամիկը թեզպէիը ձեռքն առած նատեր է. մանուկին երկու բագուկները բռնած՝ իր բոյթերով ու մատներով տղուն բագկերակները կը ճնշէ, կը շօշափէ, բագուկն ի վայր մատները կը տանի ու կը բերէ. իր աչքերը անթարթ՝ մանուկին աչքերուն յառած է. ու երբեմն ալ արմունկներէն վեր թեւերը կը ճնլէ. կը դառնայ, տղուն երեսն ի վար կը խաշակնքէ, եւ ձեռքերը պորտին ու կուրծքին վրայ դնելով՝ բոյթով կը ճնշէ, վզին մայր երակները կը ճնլէ, ճակատը կը շփէ, երբեմն – երբեմն ալ երեսին կը փշէ ու միշտ կը պտպտայ, աղօթք կ'ընէ: Յաճախ տղան կը յօրանջէ: Կը մագնիսացնէ՞, կ'ելեկտրականացնէ՞, թէ աղօթիք հրաշք կը գործէ.– վերջապէս տղան հիւանդ էր եւ կ'առողջանայ»:

Հիմա այս պատկերին հետ բաղդատութեան դիր այն նորագոյն բժիշկները՝ որոնք յաճախ հիւանդին ձեռքն իսկ չսեղմած (ժամանակ կորսնցնելու՞ թէ վարակուելու վախէն)՝ կը նստին՝ արագօրէն ստացագիր մը գրելու պէս՝ շարադրելու դեղագիր մը, որ միշտ երկրորդական է, յաճախ անօգուտ, երբեմն՝ վնասակար:

Կո՛յր պէտք է ըլլալ շտեննելու համար այն բագմաթի հիւանդները, որոնք երկար ճամբորդութիւններ կ'ընեն, բժիշկէ բժիշկ կը նետուին՝ պաշտպան մը ու նեցուկ մը գտնելու յոյսով, ու չեն իսկ փորձեր գործադրել այնքա՛ն սուղ գնուած դեղագիրները: Որովհետեւ դժուար է ընդունիլ այն բագմաթի դեղերը՝ որոնք յաճախ տրամագծօրէն հակառակ են իրարու...: Ու յետոյ՝ հիւանդին փրնտռածը միայն թուղթի կտոր մը չէր, այլ ապրելու յո՛յս, հոգեկան ուժ, տառապելու քաջութի՛ւն...:

Конец ознакомительного фрагмента.

Текст предоставлен ООО «ЛитРес».

Прочитайте эту книгу целиком, [купив полную легальную версию](#) на ЛитРес.

Безопасно оплатить книгу можно банковской картой Visa, MasterCard, Maestro, со счета мобильного телефона, с платежного терминала, в салоне МТС или Связной, через PayPal, WebMoney, Яндекс.Деньги, QIWI Кошелек, бонусными картами или другим удобным Вам способом.